

Հավելված N 10

Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ,  
տարածքային կառավարման նախարարի  
«03» մարտի 2014 թվականի N 28-Ա հրամանի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ 2014-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

**2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ**

**ՎԱՆԱՁՈՐ - 2014**

**Բովանդակություն**

<b>Հապավումների ցանկ</b>	3
<b>Ներածություն</b>	4
<b>ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2014թ. ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ</b>	6
<b>1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ</b>	12
<b>2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ</b>	15
2.1. Կրթություն	15
2.2. Մշակույթ և սպորտ	16
2.3. Առողջապահություն	17
2.4. Սոցիալական պաշտպանություն	18
<b>3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	21
3.1. Գյուղատնտեսություն	21
3.2. Բնապահպանություն	23
<b>4. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ</b>	26
4.1. 2014թ ՀՀ պետական բյուջեով մարզում նախատեսված աշխատանքները բնակ. կոմունալ տնտեսության բարեկարգման և բնակարանաշինության ոլորտներում	26
<b>ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ</b>	27
5.1. Ճանապարհաշինություն	27
5.2. Զրամատակարարում ու ջրահեռացում	28
5.3. Գազամատակարարում	30
<b>ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ</b>	30
<b>ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</b>	
6.1. Տարածքային կառավարում	30
6.2. Տեղական ինքնակառավարում և ապակենտրոնացում	31
6.3. Քաղաքացիական հասարակություն	32
<b>7. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ</b>	37
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀՀ Լոռու մարզի 2014-2017 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2014թ. Տարեկան աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքները ըստ ոլորտների</b>	39
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 2.. ՀՀ 2014 թ. պետական բյուջեով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն ըստ ծրագրերի (Լոռու մարզ), ծախսատեսակների և կատարողների</b>	43
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 3.. ՀՀ 2014թ. Տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների տրամաբանական հենքերը</b>	45

## 1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԱՌ	Ազգային անվտանգության ռազմավարություն
ԱԱՀՀՀ	Առավել աղքատ համայնքների համալիր հետազոտություն
ԱԽ	Աշխատանքային խումբ
ԱՄԳ	Աղքատության մասնակցային գնահատում
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԳԷՖ	Գլոբալ էկոլոգիական ֆոնդ
ԵՄ	Եվրամիություն
ԿՁԾ	Կայուն զարգացման ծրագիր
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՄԱԿ	
ՁԾ	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
ՄԺԾԾ	Միջին ժամկետ ծախսային ծրագիր
ՄԱՄՀ	Մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթիվ
ՄԱԿ	
ՀՊԾ	ՄԱԿ-ի համաշխարհային պարենի ծրագիր
ՄՁԱՀ	Մարդկային զարգացման ազգային հետազոտություն
ՄՁԳ	Միջազգային զարգացման գործակալություն
ՄՁՄԿ	Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
ՄՄՈՒՀ	Միջին մասնագիտական ուսումնական հաստատություն ՀՀ Սյունիքի մարզի 2014-2017 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր
ՄՁԾ	զարգացման ծրագիր
ՄՎ	Մոնիտորինգ և վերլուծություն
ՆԴՀ	Նախադպրոցական հաստատություն
ՍԾՏԳ	Սոցիալական ծառայության տեղական գրասենյակ
ՏԱՊ	2014 թվականի տարեկան աշխատանքային պլան
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություններ
ՓՄՁ	
ՁԱԿ	Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոն

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 6-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատվել է Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը, որը կազմվել է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N38 արձանագրային որոշմամբ հաստատված հայեցակարգի:

ՄՁԾ-ի իրագործման ընթացքում ակնկալվում է ստանալ հետևյալ հիմնական արդյունքները.

- ❖ Մարզի կայուն զարգացում,
- ❖ Մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման շոշափելի արդյունքների արձանագրում,
- ❖ Բնակչության եկամուտների աճ և մարդկային աղքատության կրճատում,
- ❖ Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում,
- ❖ Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման նպաստավոր, հավասար հնարավորությունների ու բարենպաստ մրցակցային դաշտի ստեղծում,
- ❖ Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում,
- ❖ Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում,
- ❖ Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում,
- ❖ Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում,
- ❖ Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացում,
- ❖ Մարզպետարանի կարողությունների ուժեղացում,
- ❖ Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում,
- ❖ Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդարձակում,
- ❖ Հանրային կառավարման համակարգում հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների արմատավորում,
- ❖ Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում,

❖ Տեղեկատվության ազատության աստիճանի բարձրացում:

ՄԶԾ-ի կազմման ընթացքում մարզպետարանում ձևավորվել են ոլորտային յոթ աշխատանքային խմբեր, որոնք, համաձայն Լոռու մարզպետի 2009 թվականի փետրվարի 25-ի թիվ 49-Ա որոշման, գործել են հետևյալ ուղղություններով.

- Արդյունաբերություն, փոքր ու միջին ձեռնարկատիրություն և մասնավոր հատված,
- Գյուղատնտեսություն, բնապահպանություն և ընդերքի օգտագործում,
- Կրթություն, մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր,
- Առողջապահություն և սոցիալական ապահովություն,
- Քաղաքաշինություն,
- Ենթակառուցվածքներ (ջրամատակարարում և ջրահեռացում, ճանապարհաշինություն, տրանսպորտ, գազամատակարարում),
- Տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում և քաղաքացիական հասարակություն:

Աշխատանքային խմբերի գործունեության արդյունքում մշակված ոլորտային ռազմավարություններն ընդգրկվել են ՄԶԾ-ում: Գնահատվել են ՄԶԾ իրագործման համար պահանջվող ֆինանսական միջոցները և նրանց ծախսման ուղղությունները: Ըստ ՄԶԾ-ի իրականացման գաղափարախոսության, յուրաքանչյուր տարվա աշխատանքային պլանները կազմելու ժամանակ, երբ հաստատված կլինեն տվյալ տարվա պետական բյուջեից մարզին հատկացված ֆինանսական միջոցները և համայնքային բյուջեները, կվերանայվեն տվյալ տարվա իրականացվելիք միջոցառումների ցանկերը՝ ըստ ոլորտների և նրանց ֆինանսավորման աղբյուրները: Սույն փաստաթղթի կազմման հիմնական նպատակը 2014-2017թթ. մարզային զարգացման ծրագրով նախատեսված և 2014թ. ընթացքում իրականացվելիք միջոցառումների տարեկան աշխատանքային պլանի (ՏԱՊ) նկարագրելն է:

ՏԱՊ-ի մեջ համադրվում են.

- ՄԶԾ-ում տվյալ տարվա համար նախատեսված միջոցառումները,
- պետական բյուջեից տվյալ տարում մարզին հատկացված միջոցները, այդ թվում Հայաստանի տարածքային զարգացման ծրագրի միջոցով հատկացված դրամաշնորհները,
- Այլ կազմակերպությունների կողմից կամ աղբյուրներից ֆինանսավորվող ու իրականացվող միջոցառումները,

2014թ. ՏԱՊ-ի կազմման ընթացքում օգտագործվել են նախորդ տարվա ՏԱՊ-ի արդյունքների մոնիտորինգի հաշվետվությունները, և սույն փաստաթուղթը կազմվել է

ոլորտային աշխատանքային խմբերում մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի, պետական բյուջեից մարզին հատկացված ֆինանսական միջոցների և համայնքային բյուջեների հնարավորությունների քննարկումների ու իրատեսական (հաշվի առնելով նաև համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությունը) գնահատման արդյունքում:

2014թ. տարեկան աշխատանքային պլանի նպատակներն են.

- Համախմբել բոլոր ֆինանսական և մարդկային միջոցները ՄՁԾ-ի գերակա նպատակների իրականացման շուրջ,
- Կապել բոլոր նախատեսվող միջոցառումները ՄՁԾ-ների արդյունքների հետ՝ «տրամաբանական հենքի» համակարգի օգնությամբ,
- Ներառել միջոցառումների իրականացման ցուցանիշները և արդյունքները տրամաբանական հենքում,
- Սահմանել այն կազմակերպությունները, որոնք պատասխանատու են կոնկրետ միջոցառումներն իրականացնելու համար,
- Հնարավորության դեպքում սահմանել միջոցառումների իրականացման ժամկետները՝ ըստ եռամսյակների,
- Սահմանել դեռևս ֆինանսական միջոցներով չապահովված միջոցառումների համար ֆինանսավորման ռազմավարությունը:

Ընդհանուր առմամբ ՏԱՊ-ում ներկայացվում են այն միջոցառումները, որոնց իրականացման համար 2014 թվականի պատասխանատու է լինելու մարզպետարանը, ինչպես նաև արձանագրվում են այն հիմքերը, որոնց վրա կառուցվելու են Ծրագրի իրականացման մոնիտորինգի աշխատանքները: Բոլոր նախատեսվող միջոցառումները մանրամասնեցված են Հավելվածում արձանագրված «Տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների տրամաբանական հենքերում»:

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2014թ. ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

ՄՁԾ իրագործման համար 2014թ. պահանջվող ֆինանսական միջոցները և նրանց ծախսման ուղղությունները գնահատվել են, պահանջվող ընդհանուր գումարը կազմել է **48,080,556.0** հազար դրամ, ընդ որում, ՄՁԾ-ում հստակեցված չի ֆինանսավորման աղբյուրները: 2014 թվականի ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջեի և ըստ ՄՁԾ-ի՝ պահանջվող գումարի տարբերությունը (ճեղքվածքը) կազմել է **-6,628,531.883** հազար դրամ:

2014 թվականի ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջեն կազմում է

**41,494,024.117** հազ. դրամ, այդ թվում՝

- ՀՀ պետական բյուջեի հատկացումներ՝ **1,384,191.70** հազար դրամ,
- Վարկային միջոցների հատկացումներ՝ **4,252,423.00** հազար դրամ,
- Միջազգային կազմակերպություններ և դոնորներ՝ **42,000.00** հազար դրամ,
- Համայնքային բյուջեների ներդրումներ՝ **325,629.42** հազար դրամ,
- Մասնավոր հատվածի ներդրումներ՝ **34,131,000.00** հազար դրամ,
- Ֆինանսավորման այլ աղբյուրներ՝ **1,358,780.00** հազար դրամ:

ՀՀ Լոռու մարզի 2014-2017 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2014թ. տարեկան աշխատանքային պլանը ըստ ֆինանսական աղբյուրների բերված է Աղյուսակ 1-ում, իսկ ՄԶԾ-ի 2014թ. կարիքների գնահատման և 2014թ.ՏԱՊ-ի համեմատականը՝ Աղյուսակ 2-ում:

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ 2014թ. ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ՝ ԸՍՏ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՍՐՔՈՒՐՆԵՐԻ**

**Աղյուսակ 1**

Հ/Հ	Ոլորտի անվանումը	մլն դրամ						
		Ընդամենը	2014թ. Պետ. բյուջեից	Միջազգային, դոնոր	Վարկային կազմակ.	Համայնքային բյուջե	Մասնավոր հատված	այլ միջոցներ
<b>1</b>	<b>Արդյունաբերություն ՓՄՁ և մասնավոր հատված</b>	<b>32,844.00</b>	<b>0.000</b>	<b>42.000</b>	<b>0.000</b>	<b>0.000</b>	<b>32,802.0</b>	<b>0.000</b>
<b>2</b>	<b>Սոցիալական ոլորտներ</b>	<b>2,468.874</b>	<b>791.094</b>	<b>0.000</b>	<b>0.000</b>	<b>0.000</b>	<b>469.000</b>	<b>1,208.78</b>
2.1.	Կրթություն	1,374.374	727.594	0.000	0.000	0.000	469.000	177.780
2.2.	Մշակույթ և սպորտ	63.500	63.500	0.000	0.000	0.000	0.000	0.000
2.3.	Առողջապահություն	1,031.000	0.000	0.000	0.000	0.000	0.000	1,031.000
2.4.	Սոցիալական ապահովություն	0.000	0.000	0.000	0.000	0.000	0.000	0.000
<b>3</b>	<b>Գյուղատնտեսություն և բնապահպանություն</b>	<b>385.998</b>	<b>12.000</b>	<b>0.000</b>	<b>0.000</b>	<b>223.998</b>	<b>0.000</b>	<b>150.000</b>
3.1.	Գյուղատնտեսություն	162.000	12.000	0.000	0.000	0.000	0.000	150.000
3.2.	Բնապահպանություն	223.998	0.000	0.000	0.000	223.998	0.000	0.000
<b>4</b>	<b>Քաղաքաշինություն</b>	<b>1,060.000</b>	<b>200.00</b>	<b>0.000</b>	<b>0.000</b>	<b>0.000</b>	<b>860.000</b>	<b>0.000</b>
4.1.	Բնակարանաշինություն	1,060.00	200.00	0.00	0.00	0.00	860.000	0.000
4.2.	Բնակարանային տնտես. և բարեկարգում	0.00	0.000	0.000	0.000	0.00	0.000	0.000
<b>5</b>	<b>Ենթակառուցվածքներ</b>	<b>4,735.1517</b>	<b>381.098</b>	<b>0.000</b>	<b>4,252.423</b>	<b>101.631</b>	<b>0.000</b>	<b>0.000</b>
5.1.	Ճանապարհաշինություն	443.8328	381.098	0.000	0.000	62.735	0.000	0.000
5.2.	Զրամատակարարում	4,291.319	0.000	0.000	4,252.423	38.896	0.000	0.000
5.3.	Գազամատակարարում	0.0000	0.000	0.000	0.000	0.000	0.000	0.000

Ընդամենը	41,494.0241	1,384.192	42.000	4,252.423	325.62942	34,131.00	1,358.78
----------	-------------	-----------	--------	-----------	-----------	-----------	----------

Աղյուսակ 2

ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 6-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված ՀՀ Լոռու մարզի 2014-2017 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2014թ. գնահատված կարիքների և ՏԱՊ-ի համեմատականը

(հազ դրամ)

Հ/Հ	Ոլորտը (ֆինանսավորման աղբյուրը)	2014 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի	2014թ. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի ֆինանսավորումը	ՏԱՊ-ի և ՄՁԾ-ի տարբերությունը (ճեղքվածք)
<b>1</b>	<b>ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ</b>	<b>25,506,100.000</b>	<b>32,844,000.000</b>	<b>7,337,900.000</b>
1.1	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝ <i>Սեփական միջոցներ</i> <i>Վարկային միջոցներ</i>		<b>0.00</b> 0.00 0.00	
1.2	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ		<b>42,000.000</b>	
1.3	Համայնքային բյուջե			
1.4	Մասնավոր ներդրողներ		<b>32,802,000.000</b>	
1.5	Այլ աղբյուրներ			

<b>2</b>	<b>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԵՐ (2+3+4+5)</b>	<b>3,419,040.00</b>	<b>2,468,874.00</b>	<b>-950,166.00</b>
1	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝ <i>Սեփական միջոցներ</i> <i>Վարկային միջոցներ</i>		<b>791,094.00</b> 791,094.00 0.00	
2	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ			
3	Համայնքային բյուջե			
4	Մասնավոր ներդրողներ		<b>469,000.00</b>	
5	Այլ աղբյուրներ		<b>1,208,780.00</b>	

<b>2</b>	<b>ԿՐԹՈՒԹՅՈՒՆ</b>	<b>1,048,000.000</b>	<b>1,374,374.000</b>	<b>326,374.000</b>
2.1	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝ <i>Սեփական միջոցներ</i> <i>Վարկային միջոցներ</i>		<b>727,594.00</b> 727,594.00	
2.2	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ			
2.3	Համայնքային բյուջե			
2.4	Մասնավոր ներդրողներ		<b>469,000.00</b>	
2.5	Այլ աղբյուրներ		<b>177,780.00</b>	



<b>3</b>	<b>ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՄՊՈՐՏ</b>	<b>494,000.000</b>	<b>63,500.000</b>	<b>-430,500.000</b>
3.1	«Վ պետական բյուջե, այդ թվում՝		<b>63,500.00</b>	
	Սեփական միջոցներ		63,500.00	
	Վարկային միջոցներ			
3.2	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ			
3.3	Համայնքային բյուջե			
3.4	Մասնավոր ներդրողներ			
3.5	Այլ աղբյուրներ			
<b>4</b>	<b>ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ</b>	<b>1,312,800.000</b>	<b>1,031,000.000</b>	<b>-281,800.000</b>
4.1	«Վ պետական բյուջե, այդ թվում՝		<b>0.00</b>	
	Սեփական միջոցներ		0.00	
	Վարկային միջոցներ		0.00	
4.2	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ			
4.3	Համայնքային բյուջե			
4.4	Մասնավոր ներդրողներ			
4.5	Այլ աղբյուրներ		<b>1,031,000.00</b>	
<b>5</b>	<b>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>564,240.000</b>	<b>0.000</b>	<b>-564,240.000</b>
5.1	«Վ պետական բյուջե, այդ թվում՝		<b>0.00</b>	
	Սեփական միջոցներ		0.00	
	Վարկային միջոցներ		0.00	
5.2	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ			
5.3	Համայնքային բյուջե			
5.4	Մասնավոր ներդրողներ			
5.5	Այլ աղբյուրներ			
<b>6</b>	<b>ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>3,703,193.000</b>	<b>1,060,000.000</b>	<b>-2,643,193.000</b>
6.1	«Վ պետական բյուջե, այդ թվում՝		<b>200,000.00</b>	
	Սեփական միջոցներ		200,000.00	
	Վարկային միջոցներ		0.00	
6.2	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ			
6.3	Համայնքային բյուջե			
6.4	Մասնավոր ներդրողներ		<b>860,000.00</b>	
6.5	Այլ աղբյուրներ			

<b>7</b>	<b>ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ</b>	<b>3,211,000.000</b>	<b>162,000.000</b>	<b>-3,049,000.000</b>
7.1	«« պետական բյուջե, այդ թվում՝		<b>12,000.00</b>	
	Սեփական միջոցներ		12,000.00	
	Վարկային միջոցներ		0.00	
7.2	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ			
7.3	Համայնքային բյուջե			
7.4	Մասնավոր ներդրողներ			
7.5	Այլ աղբյուրներ		<b>150,000.00</b>	

<b>8</b>	<b>ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>223,998.700</b>	<b>223,998.400</b>	<b>-0.300</b>
8.1	«« պետական բյուջե, այդ թվում՝		<b>0.00</b>	
	Սեփական միջոցներ		0.00	
	Վարկային միջոցներ		0.00	
8.2	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ			
8.3	Համայնքային բյուջե		<b>223,998.40</b>	
8.4	Մասնավոր ներդրողներ			
8.5	Այլ աղբյուրներ			

	<b>ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ (9+10+11)</b>	<b>8,401,223.000</b>	<b>4,735,151.717</b>	<b>-3,666,071.283</b>
1	«« պետական բյուջե, այդ թվում՝		<b>4,633,520.700</b>	
	Սեփական միջոցներ		381,097.70	
	Վարկային միջոցներ		4,252,423.00	
2	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ			
3	Համայնքային բյուջե		<b>101,631.017</b>	
4	Մասնավոր ներդրողներ			
5	Այլ աղբյուրներ			

<b>9</b>	<b>ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>5,198,000.000</b>	<b>443,832.801</b>	<b>-4,754,167.199</b>
9.1	«« պետական բյուջե, այդ թվում՝		<b>381,097.70</b>	
	Սեփական միջոցներ		381,097.70	
	Վարկային միջոցներ			
9.2	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ			
9.3	Համայնքային բյուջե		<b>62,735.10</b>	
9.4	Մասնավոր ներդրողներ			
9.5	Այլ աղբյուրներ			

<b>10</b>	<b>ԶՐԱՄՍԱԿԱՐԱՐՈՒՄ</b>	<b>2,941,423.000</b>	<b>4,291,318.916</b>	<b>1,349,895.916</b>
10.1	«« պետական բյուջե, այդ թվում՝		<b>4,252,423.00</b>	
	Սեփական միջոցներ		0.00	
	Վարկային միջոցներ		4,252,423.00	

10.2	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ			
10.3	Համայնքային բյուջե		38,895.92	
10.4	Մասնավոր ներդրողներ			
10.5	Այլ աղբյուրներ			

11	<b>ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ</b>	261,800.000	0.000	-261,800.000
11.1	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝		0.000	
	Սեփական միջոցներ			
	Վարկային միջոցներ			
11.2	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ			
11.3	Համայնքային բյուջե			
11.4	Մասնավոր ներդրողներ			
11.5	Այլ աղբյուրներ			
12	<b>ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ</b>	615,000.000	0.000	-615,000.000
12.1	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝		0.000	
	Սեփական միջոցներ			
	Վարկային միջոցներ			
12.2	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ			
12.3	Համայնքային բյուջե			
12.4	Մասնավոր ներդրողներ			
12.5	Այլ աղբյուրներ			
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ</b>	45,079,554.700	41,494,024.117	-3,585,530.583
1	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝		5,636,614.700	
	Սեփական միջոցներ		1,384,191.70	
	Վարկային միջոցներ		4,252,423.00	
2	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ		42,000.000	
3	Համայնքային բյուջե		325,629.417	
4	Մասնավոր ներդրողներ		34,131,000.000	
5	Այլ աղբյուրներ		1,358,780.000	

## 1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Արդյունաբերության, Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Այս կապակցությամբ 2014թ. ՄՁԾ-ով առաջարկվում է բարձրացնել գործարար ակտիվությունը մարզում բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով՝ ներգրավելով այդ գործնթացներում ՏԻՄ-երի և գործարար համայնքի ներկայացուցիչներին:

Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է, շարունակելով առանձին ՓՄՁ-ների մակարդակով ցուցաբերվող աջակցությունը, առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով անցում կատարել մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը՝

- ✓ ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում,
- ✓ Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգային դրույթների իրականացում,
- ✓ ՀՀ ՓՄՁ ԶԱԿ-ի Լոռու մասնաճյուղի և ՓՄՁ զարգացման մարզային խորհրդի սերտ ու համագործակցված աշխատանքի կազմակերպում:

Մասնավոր ներդրումների ներհոսքին նպաստող կարևոր գործոն է Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով ընդունված մարզի գերակա ոլորտների զարգացման հայեցակարգային դրույթների հետևողական իրականացումը: Հայտնի է, որ մարզի բոլոր տարածաշրջանների համար գերակա ոլորտներ են գյուղմթերքների վերամշակումը և իրացումը, ինչպես նաև զբոսաշրջությունը և հարակից ծառայությունները: Սակայն, որպեսզի ներդրումներն արդարացված լինեն և նվազի նրանց ռիսկայնությունը, անհրաժեշտ է հստակեցնել այդ ապրանքների և ծառայությունների պահանջարկի ծավալները և իրացման շուկաները: Այստեղ որոշիչ է մարզպետարանի, Մարզային խորհրդի, ինչպես նաև ՓՄՁ ԶՄԽ-ի դերը, ընդ որում՝ ինչպես տարածքաշրջանային ծրագրերի մշակման, այնպես էլ տարեկան աշխատանքային պլանների շրջանակներում մասնավոր ներդրողներին խրախուսելու գործում:

## ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Մարզի տնտեսության առաջատար բնագավառի՝ արդյունաբերության մասով 2014-2017թթ. Լոռու մարզի ՄՁԾ-ով կարիքի գնահատում չի կատարվել, քանի որ այս բնագավառում ներդրումների բացարձակ մեծամասնությունն ընկնում է մասնավոր հատվածի վրա:

Չնայած համաշխարհային տնտեսությունում տագնապալի որոշակի սպասումների, 2014 թվականի համար մարզի արդյունաբերության գերակա ճյուղերում մասնավոր

ընկերությունների, ներդրողների և ֆինանսական կառույցների կողմից ՄՁԾ-ով պլանավորվել է ընդամենը **25,506.10** մլն դրամի ներդրումներ, այդ թվում ըստ ոլորտների՝

- ❖ Հանքարդյունաբերություն **10,250.00 մլն դրամ**
- ❖ Էներգետիկա **9,303.60 մլն դրամ**
- ❖ Մշակող արդյունաբերություն **1,852.50 մլն դրամ**
- ❖ Տեղեկատվական տեխնալոգիաներ **4,100.00 մլն դրամ**

Մարզի արդյունաբերության և մասնավոր հատվածում պլանավորված ներդրումների գերակշիռ մասը հանքարդյունաբերության և էներգետիկայի ոլորտներում է:

**Լոռու ՄՁԾ-ի 2014թ. համար կարիքների գնահատման և 2014թ. ՏԱՊ-ում ընդգրկված ներդրումային ծրագրերի համադրումը Արդյունաբերություն ՓՄՁ և մասնավոր հատված ոլորտում**

Ոլորտը / ֆինանսավորման աղբյուրը	2014 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի	2014թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջե	հազար դրամ
			ՏԱՊ-ի և ՄՁԾ-ի տարբերությունը (ճեղքվածք)
<b>1. Արդյունաբերություն, ՓՄՁ և մասնավոր հատված</b>	<b>25,506,100.00</b>	<b>32,802,000.0</b>	<b>+7,295,900.0</b>
<i>որից՝</i>			
Պետական բյուջե			
Վարկային միջոցներ	<b>4,100,000.00</b>		<b>-4,100,000.0</b>
Միջազգային կազմակերպություններ և դոնորներ			
Համայնքների բյուջեներ			
Մասնավոր ներդրումներ	<b>21,406,100.00</b>	<b>32,802,000.00</b>	<b>+11,396,900.0</b>
Այլ աղբյուրներ			

- ՀՀ Լոռու մարզը և Ֆրանսիայի Պրովանս Ալպեր Լազուրի Ափ ռեգիոնը միջազգային համագործակցության շրջանակներում (մինչև 2014թ-ի դեկտեմբեր) նախատեսել են
  - ✓ մարզում համատեղ իրականացնել տուրիզմի եւ ագրոտուրիզմի զարգացման ծրագրեր՝ մինչև 80.0 հազ եվրո արժողությամբ: Հաշվի առնելով ֆրանսիական առաջադեմ, հարուստ փորձը, նախատեսվել է Թումանյանի տարածաշրջանում (Ալավերդի քաղաքում) ստեղծել զբոսաշրջային մարզային գրասենյակ: Ծրագրի նախնական փուլում Ֆրանսիայում կվերապատրաստվեն գրասենյակի աշխատակազմը եւ գիդեր: Կստեղծվի քառալեզու ինտերնետային կայք, լուսանկարների եւ տեսաֆիլմերի ֆոնդ, կտպագրվեն քառալեզու տեղեկատվական թերթիկներ, կիրականացվի մոնիտորինգ և գնահատում՝ ծրագրի հաջորդ փուլերի

իրականացման նպատակով: Լոռու մարզպետարանը զբոսաշրջության զարգացման նպատակով որոշակի քայլեր է ձեռնարկվել, մասնավորապես, Թումանյանի տարածաշրջանի 7 համայնքների (Ալավերդի, Ախթալա, Թումանյան, Օձուն, Արդվի, Հաղպատ, Դսեղ) մասնակցությամբ նախաձեռնել են ստեղծել «Լոռու Տուրիզմ» հիմնադրամ, որի ֆինանսական միջոցները կուղղորդվեն Ալավերդի քաղաքում նախատեսվող զբոսաշրջության մարզային գրասենյակի պահպանմանն ու շահագործմանը, ինչպես նաև մարզում տուրիզմի զարգացմանն ուղղված այլ ծրագրերի իրականացմանը:

- ✓ Ագրոտուրիզմի բաղադրիչով նախատեսվել է մասնագետների վերապատրաստում Ֆրանսիայում, որից հետո տեղում նրանց ուժերով վերապատրաստողների վերապատրաստումների կազմակերպում: Ծրագրվում է նաև Հայաստանի Ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղում ագրոտուրիզմի բաժնի բացման հարցի քննարկումը համապատասխան պետական կառույցների մակարդակով:
- Ռիոն Ալպեր տարածաշրջանի աջակցությամբ Դեսին-Ստեփանավան կազմակերպությունը Ստեփանավանի ինֆորմացիոն կենտրոնի եւ Ստեփանավանի քաղաքապետարանի հետ համատեղ նախատեսում է էկոտուրիզմի զարգացման ծրագրի իրականացում Ստեփանավան քաղաքում եւ նրան հարակից համայնքներում: Ծրագրի ժամկետը 2 տարի է, սկիզբը՝ 2013թ-ի երկրորդ կեսից: Նախատեսվում են քայլքային երթուղիների մշակում, քայլքային արշավների գիդերի եւ տեղական դերակատարների վերապատրաստում, քարտեզագրում եւ նյութատեխնիկական բազայի վերազինում:
- 2013թ-ի սեպտեմբերից ՄԱԿ-ի արդյունաբերության զարգացման գործակալության կազմակերպությունը (ՄԱԱԶԿ)՝ Ավստրիայի կառավարության ֆինանսական աջակցությամբ Լոռու եւ Շիրակի մարզերում սկսել է պիլոտային ծրագիր «Աջակցություն Հայաստանի երիտասարդության ձեռնարկատիրության զարգացմանը»: Ծրագրի սկզբնական փուլում իրականացվել է մոնտորինգ, որպես մարզի զարգացման ոլորտներ նախանշվել են կաթնամթերքի վերամշակումը, պանրի արտադրությունը, տուրիզմը եւ ոչխարաբուծությունը: Զուգահեռաբար իրականացվում են երիտասարդ ձեռներեցների եւ սկսնակների վերապատրաստման դասընթացներ, որից հետո լավագույն բիզնես-ծրագրերը կֆինանսավորվեն ցածր տոկոսադրույքով վարկի ձեռով:
- Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի Վանաձորի մասնաճյուղը հաջողությամբ շարունակում է իր աշխատանքը մարզում: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի աջակցության հիմնական ուղղություններն են՝ գործարար տեղեկատվություն, գործարար խորհրդատվություն, գործարար ուսուցում, վերապատրաստում, վարկային երաշխավորության տրամադրում:

**2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ**

**2.1. Կրթություն**

2014 թ.Լոռու մարզի կրթության ոլորտի գերխնդիրը մնում է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով բնագավառում կրթական բարեփոխումների շարունակականությունը և համակարգի արդյունավետ գործունեությունը:

Ուշադրություն է դարձվելու ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետության և կառավարման մեխանիզմների կատարելագործմանը, հաշվետվողականության համակարգի և գործունեության թափանցիկության բարելավմանը, ուսումնական գործընթացը տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցմանը, ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառմանը, դպրոցի ավարտական և միասնական քննական համակարգի կատարելագործմանը, դասավանդման որակի բարձրացմանը, մասնավարժների մասնագիտական կրթության որակի բարելավմանը:

Շարունակվելու է կատարելագործվել հատուկ կրթական և առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ինտեգրման գործընթացը (ներառական կրթություն): Ուշադրության կենտրոնում կմնան պարտադիր ուսուցումից սոցիալական պատճառներով դուրս մնացած երեխաներին հանրակրթական համակարգ վերադարձնելու խնդիրները:

2014թ. ՏԱՊ-ով կշարունակվեն դպրոցների վերանորոգման, տեխնիկական վերազննման և գույքի թարմացման միջոցառումները, ուսուցիչների ատեստավորման, մասնագիտական կարողությունների բարձրացման, դպրոցների կառավարման մեխանիզմների ուժեղացման, նախադպրոցական և մասնագիտական կրթության զարգացման գործընթացները:

**Լոռու ՄՁԾ-ի 2014թ. համար կարիքների գնահատման և 2014թ. ՏԱՊ-ում ընդգրկված ներդրումային ծրագրերի համադրումը կրթության ոլորտում**  
 հազ. դրամ

Ոլորտը / ֆինանսավորման աղբյուրը	2014 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի	2014թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջե	ՏԱՊ-ի և ՄՁԾ-ի տարբերությունը (ճեղքվածք)
<b>Կրթություն</b>	<b>1,048,000.000</b>	<b>1,374,374.000</b>	<b>326,374.000</b>
Պետական բյուջե		<b>727,594.0</b>	
Վարկային միջոցներ			
Միջազգային կազմակերպություններ և դոնորներ			
Համայնքների բյուջեներ			
Մասնավոր ներդրումներ		<b>469,000.0</b>	
Այլ աղբյուրներ		<b>177,780.0</b>	

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2014թ. կրթության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **1,048,000.0** հազ. դրամ, սակայն փաստացի

պլանավորվել է կատարել **1,374,374.0** հազ. դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում **727,594.0** հազ. դրամը պետ. բյուջեով (պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության նախարարություն), **177,780.0** հազ. դրամը՝ ՀՄՆՀ միջոցներից և **469,000.0** հազար դրամը՝ մասնավոր ներդրողների («Տաշիր» Բարեգործական հիմնադրամ) միջոցներից:

2014թ-ի պետական բյուջեի համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության կրթական հաստատությունների հիմնանորոգման ծրագրով նախատեսվել է **727.594** մլն դրամ, այդ թվում՝ Մարցի դպրոցի կառուցում (225.0 մլն դրամ), Սպիտակի մանկապատանեկան մարզադպրոցի ըմբշամարտի դահլիճի կառուցում (125.0 մլն դրամ), Վանաձորի թիվ 18 դպրոցի վերակառուցում (100.0 մլն դրամ) և Ալավերդու արհեստագործական ուսումնարանի վերակառուցում (277.59 մլն դրամ):

**2.2 Մշակույթ և սպորտ**

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2014թ. մշակույթի և սպորտի ոլորտների համար պահանջվող գումարը եղել է **494,000.0** հազ. դրամ, սակայն փաստացի պլանավորվել է կատարել **63,500.0** հազ. դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում **63,500.0** հազ. դրամը պետ. բյուջեով (պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն):

**Լոռու ՄՁԾ-ի 2014թ. համար կարիքների գնահատման և**

**2014թ. ՏԱՊ-ում ընդգրկված ներդրումային ծրագրերի համադրումը մշակույթի և սպորտի ոլորտներում**

Ոլորտը/Ֆինանսավորման աղբյուրը	2014 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի	2014թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջե	հազ. դրամ
			ՏԱՊ-ի և ՄՁԾ-ի տարբերությունը (ճեղքվածք)
<b>Մշակույթ և սպորտ</b>	<b>494,000.0</b>	<b>63,500.0</b>	<b>-430,500.0</b>
Պետական բյուջե		<b>63,500.0</b>	
Վարկային միջոցներ			
Միջազգային կազմակերպություններ և դոնորներ			
Համայնքների բյուջեներ			
Մասնավոր ներդրումներ			
Այլ աղբյուրներ			

2014 թ-ի պետական բյուջեյի միջոցներով մշակույթի նախարարության կողմից կիրականացվեն մարզի մշակութային-պատմական և հոգևոր կոթողների՝ Քոբայրավանքի (16 մլն.դրամ), Սանահինի վանքային համալիրի (18.3 մլն դրամ), «Լոռի Բերդ» ամրոցի (15,0 մլն դրամ), Դսեղի Քառասնից մանկանց վանքի ( 1.2 մլն դրամ), Աքորու Բզավոր եկեղեցու (13.0 մլն դրամ) ամրակայման և նորոգման աշխատանքները:



### 2.3. Առողջապահություն

Հաշվի առնելով մարզի առողջապահության ոլորտի ներկա իրավիճակը, առողջապահական ծառայությունների մատչելիության ու որակի բարձրացումը մարզում սահմանվել է որպես ՄԶԾ-ի ոլորտային գերակա նպատակ:

Այս նպատակին է միտված առողջության առաջնային պահպանման մակարդակի, առաջնային և երկրորդային բուժօգնության բուժհաստատությունների շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավման, կադրերի վերապատրաստման տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ուժեղացման ուղղությունները:

- Տեղային և մարզային մակարդակներում կառավարման, մոնիտորինգի և վերահսկողության բարելավում,
- Տարբեր մակարդակների բուժհաստատություններում մասնագետներով և սարքավորումներով հագեցվածության ապահովում,
- Ազգաբնակչությանը ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացում,
- Բնակչության ոչ վարակիչ հիվանդություններով հիվանդացության և մահացության կրճատում,
- Սոցիալական հատուկ նշանակություն ունեցող և տարափոխիկ հիվանդությունների կանխարգելում,
- Շտապ բուժօգնության մատչելիության և սպասարկման որակի բարելավում,
- Երեխաներին և դեռահասներին ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացում,
- Նորածինների առողջության բարելավում, նորածնային հիվանդացության և մահացության կրճատում, մայրական մահացության կրճատում
- Վաղ հասակի երեխաների հիվանդացության և մահացության իջեցում, առողջ աճի և զարգացման ապահովում:

Այս միջոցառումներից շատերի իրականացումը շարունակական բնույթ ունի, բայց հիմնականում կախված է դոնոր կազմակերպությունների միջոցների և կառավարության շարունակական օժանդակության առկայությունից:

2013թ. մարզի առողջապահության բնագավառին տարաբնույթ աջակցություն ցուցաբերելու նպատակով մարզում ստեղծվել է «Լոռու առողջապահություն» հիմնադրամը, որը մարզի մի շարք առողջապահական ընկերությունների 2013թ. տրամադրել է **2,760.0** հազ դրամ՝ գույք և բժշկական սարքավորումներ ձեռք բերելու համար, ինչպես նաև **1,100.0** հազ դրամ՝ հիվանդ բուժաշխատողների բուժօգնության նպատակով:

2014թ ևս նախատեսվում է աջակցություն մի շարք առողջապահական ընկերությունների: Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով **2014թ.** առողջապահության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **1,312,800.0** հազ. դրամ, փաստացի պլանավորվել է կատարել **1,031,000.0** հազ. դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում **31,000.0** հազ. դրամը ՀՄՆՀ –ի միջոցներով և **1,000,000.0** հազ. դրամը՝ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի համաֆինանսավորմամբ:

2014թ. ՀՄՆՀ-ի միջոցներով (31.0 մլն դրամ) ավարտին կհասցվի Ալավերդու դիստրիկտի կառուցումը:

ՀՀ առողջապահության նախարարության ԾԻԳ-ի կողմից 2014թ. հայտարարվել են մրցույթներ՝ վարկային միջոցներով Վանաձորի բժշկական կենտրոնի նոր շենքի և «Լեռնապատ ԱԿ» ՓԲԸ-ի շենքի շինարարության նպատակով: 2014թ. նախատեսված աշխատանքների ծավալները կհստակեցվեն մրցույթների հաղթողներին որոշելուց հետո, բայց Վանաձորի բժշկական կենտրոնի նոր շենքի կառուցման աշխատանքների համար «Տաշիր» ԲՀ-ը 2014թ. կիրականացվի շուրջ 1,000.0 մլն դրամի համաֆինանսավորում:

**Լոռու ՄՁԾ-ի 2014թ. համար կարիքների գնահատման և 2014թ. ՏԱՊ-ում ընդգրկված ներդրումային ծրագրերի համադրումը առողջապահության ոլորտում**

հազ. դրամ

Ոլորտը/Ֆինանսավորման աղբյուրը	2014 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի	2014թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջե	ՏԱՊ-ի և ՄՁԾ-ի տարբերությունը (ճեղվածք)
<b>Առողջապահություն</b>	<b>1,312,800.0</b>	<b>1,031,000.0</b>	<b>-281,800.0</b>
Պետական բյուջե			
Վարկային միջոցներ			
Միջազգային կազմակերպություններ և դոնորներ			
Համայնքների բյուջեներ			
Մասնավոր ներդրումներ			
Այլ աղբյուրներ		<b>1,031,000.0</b>	

Առողջապահության ոլորտի տրամաբանական հենքը բերված է Հավելված 3.1.- ում

**2.4. Սոցիալական պաշտպանություն**

2014-2017թ.թ. ՄՁԾ-ով բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացման նպատակով թվով հինգ ծրագրային ուղղություններով 2014թ. առաջարկվում են, հետևյալ ծրագրերը՝

- **Լոռու մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների համակարգի գործունեության արդյունավետությանը և որակի բարձրացմանը միտված նյութատեխնիկական պայմանների բարելավում՝**
  - ✓ թիվ 1 ծրագիր՝ «Լոռու մարզում սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինների շենքային պայմանների բարելավում և սոցիալական տարբեր ծառայությունների գործունեության կազմակերպում և համակարգում»,

- **Սոցիալական ապահովության բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստում, Սոցիալական սպասարկման բնագավառի մատչելի միջավայրի ապահովում**
  - ✓ թիվ 2 ծրագիր՝ «Լոռու մարզի քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում թեքահարթակների կառուցում»,
- **Տարածքային սոցիալական պլանների կազմում և իրականացում՝**
  - ✓ թիվ 3 ծրագիր՝ «Աջակցություն ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից իրականացվող «Աշխատանքային միգրացիայի սոցիալական հետևանքների մեղմացում և տեղական զարգացման գործընթացում միգրանտների ներգրավվածության մեծացում» ծրագրին՝ (համագործակցություն «Տարածքային սոցիալական պլաններ» ենթածրագրերին),
- **Աջակցություն բնակարանային ապահովման քաղաքականությանը**
  - ✓ թիվ 4 ծրագիր՝ «Փախստականների ընտանիքների բնակարանային ապահովում»
  - ✓ թիվ 5 ծրագիր՝ «Ձուլված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովում»:

Ծրագրային աշխատանքների իրականացման համար բացի պետական բյուջեի միջոցներից ակնկալվում են նաև որոշակի ներդրումներ միջազգային, դոնոր և մասնավոր կազմակերպությունների կողմից, որոնք կնպաստակառուղվեն ՄԶԾ-ով ոլորտում նախատեսված աշխատանքների իրականացմանը:

2014թ. սոցիալական ծառայությունների մատչելիությունն ու որակը բարձրացնելու համար անհրաժեշտ է ընդլայնել սոցիալապես խոցելի խմբերին ուղղված աջակցության ծրագրերը, մասնավորապես բարելավել կարիքավոր ընտանիքների, անօգնական տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց և գործազուրկների պաշտպանվածությունը: Բազմամյա ծրագրերի իրականացման համար նախատեսվում են իրականացնել ընդգրկուն աշխատանքներ, որոնցում կարևորվում է նաև սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների շարունակական աջակցության ցուցաբերումը:

Պետությունը կանոնակարգված աշխատանքներ է իրականացնում ինտեգրված սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների ստեղծման ուղղությամբ, որը ՄԶԳ ծրագրով նախատեսված աշխատանքներից է, որի իրականացմամբ Լոռու մարզում արմատապես կլուծվի այդ կառույցների շենքային պայմանների բարելավման հիմնախնդիրը: Պետական քաղաքականության հիմքում դրված է որակյալ համալիր սոցիալական ծառայությունների մատուցումը, որի իրականացման համար շատ է կարևորվում նաև սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների (պետական և ոչ պետական) համակարգչային տեխնիկայով հագեցվածությունը և համացանցային կապով ապահովումը: Ներկայումս համակարգչային կապով մարզպետարանի հետ կապված են մարզի գրեթե բոլոր համայնքները, իսկ էլեկտրոնային կայք-էջ ունեն փոքրաթիվ համայնքներ (հիմնականում տարածաշրջանային կենտրոնները), գրեթե 7 տոկոսը: Որակյալ սոցիալական ծառայություններ մատուցելու նախապայման է բնագավում ներգրված աշխատողների մասնագիտական հմտությունների շարունակական կրթությունը:

2014թ. զբաղվածության արդյունավետությունը բարձրացնելու, գործազուրկների և աշխատանք փնտրողների համար աշխատանքի հնարավորությունները մեծացնելու նպատակով ՀՀ կառավարությունը կշարունակի իր նպատակամետ քաղաքականությունը: Զուգահեռաբար համագործակցային գործունեության արդյունքում կարծում ենք, որ հնարավորություն կունենանք իրականություն դարձնել ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից իրականացվող «Աշխատանքային միգրացիայի սոցիալական հետևանքների մեղմացում և տեղական զարգացման գործընթացում միգրանտների ներգրավվածության մեծացում» ծրագիրը, ըստ որի Լոռու մարզում ենթադրվում է կենսագործել թվով երեք ենթածրագրեր (տարածքային սոցիալական պլաններ):

ՄԶԾ առաջարկվել է նաև տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուծմանն ուղղված քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում թեքահարթակների կառուցումը: Ելնելով նախորդ տարիների արդյունավետ աշխատանքից կարող ենք փաստել, որ 2014թ. ևս կապահովվի զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների բնակարանային ապահովման ծրագիրը: Ցանկալի է, որ նույնատիպ՝ բնակապահովման ծրագիր իրականացվի անօթևան փախստականների ընտանիքների համար:

**Լոռու ՄԶԾ-ի 2014թ. համար կարիքների գնահատման և 2014թ. ՏԱՊ-ում ընդգրկված ներդրումային ծրագրերի համադրումը սոցիալական ապահովության ոլորտում**

Ոլորտը/Ֆինանսավորման աղբյուրը	2014 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի	2014թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջե	հազ. դրամ
			ՏԱՊ-ի և ՄԶԾ-ի տարբերությունը (ճեղքվածք)
<b>Սոցիալական ապահովություն</b>	<b>564,240.00</b>	<b>0.00</b>	<b>- 564,240.00</b>
Պետական բյուջե			
Վարկային միջոցներ			
Միջազգային կազմակերպություններ և դոնորներ			
Համայնքների բյուջեներ			
Մասնավոր ներդրումներ			
Այլ աղբյուրներ			

Սոցիալական ապահովության ոլորտի տրամաբանական հենքը բերված է Հավելված 3.2. ում:

**3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

**3.1. Գյուղատնտեսություն**

Մարզի տնտեսության մեջ գյուղատնտեսության ոլորտն ավանդաբար նշանակալից տեղ է զբաղեցրել: Սակայն ներկա շրջանում գյուղատնտեսական արտադրողականության բարձրացումը ՄԶԾ-ի այս ոլորտի ամենակարևոր նպատակներից է: Այս նպատակն իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ գյուղատնտեսական հեռանկարների վերաբերյալ հստակ պատկերացումներ, հստակ սահմանված ոլորտային գերակայություններ, լավ հիմնավորված ռազմավարություն, ինչպես նաև համատեղ գործողություններ տարածքային կառավարման մարմինների, գյուղատնտեսական ասոցիացիաների, համայնքների և ֆերմերների կողմից, ինչպես նաև ֆինանսական միջոցների առկայություն:

Լոռու մարզի զարգացման ծրագրում առաջնային թիրախ է.

1. սերմնաբուծական տնտեսությունների հիմնումը հացահատիկային, միամյա ու բազմամյա խոտաբույսերի սերմարտադրության համար,
2. բանջարեղենի պահպանման սառնարանային տնտեսությունների հիմնում,
3. կարտոֆիլի, բանջարեղենի և պտղի վերամշակման արտադրամասերի հիմնում,
4. կաթի սառեցման և վերամշակման արտադրամասերի հիմնում:

**Լոռու ՄԶԾ-ի 2014թ. համար կարիքների գնահատման և 2014թ. ՏԱՊ-ում ընդգրկված ներդրումային ծրագրերի համադրումը գյուղատնտեսության ոլորտում**  
 հազ. դրամ

Ոլորտը/Ֆինանսավորման աղբյուրը	2014 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի	2014թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջե	ՏԱՊ-ի և ՄԶԾ-ի տարբերությունը (ճեղքվածք)
<b>Գյուղատնտեսություն</b>	<b>3,211,000.0</b>	<b>162,000.0</b>	<b>-3,049,000.0</b>
Պետական բյուջե		<b>12,000.0</b>	
Վարկային միջոցներ			
Միջազգային կազմակերպություններ և դոնորներ			
Համայնքների բյուջեներ			
Մասնավոր ներդրումներ			
Այլ աղբյուրներ		<b>150,000.0</b>	

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2014թ. գյուղատնտեսության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **3,211,000.0** հազ. դրամ: Ֆինանսական բոլոր աղբյուրների հաշվին 2014թ. փաստացի պլանավորվել է կատարել **162,000.0** հազ. դրամ ծավալով աշխատանքներ՝ այդ թվում **12,000.0** հազ. դրամը՝ պետբյուջի միջոցներից (Այրում-Ճոճկան, Շնող-1, Ճոճկան-1 և Ճոճկան-2 պոմպային կայանների

վերանորոգում) և **150,000.0** դրամը՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ մարզում իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցակցության» ծրագրի միջոցներից:

Պետական բյուջեի ֆինանսավորմամբ 2014 թվականին.

- ✓ տարբեր հիվանդությունների դեմ պատվաստում կատանան 79,000 խոշոր եղջերավոր կենդանիներ, 27,000 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ, 7,000 գլուխ խոզեր, 137,000 թև թռչուններ (ներկայացված են ոչ պաշտոնական տվյալներ, ֆինանսավորման գումարները ճշտված չեն)
- ✓ Այցելություններ և ուսումնասիրություններ կիրականացվեն մարզի կաթի վերամշակման արտադրամասերում՝ մարզում արտադրվող կաթի սպառման հետ կապված խնդիրներին համալիր լուծում տալու նպատակով:
- ✓ Համայնքի անասնաբույժների մասնագիտական գիտելիքների վերապատրաստման նպատակով սննդամթերքի անվտանգության ծառայության Լոռու մարզային կենտրոնի և ԳԱՄԿ-ի հետ համատեղ համայնքների անասնաբույժների հետ կանցկացվեն սեմինար խորհրդակցություններ:

Աշխատանքային տարեկան պլանի նպատակներից է նաև գյուղատնտեսական ենթակառուցվածքների բարելավումը: Նախատեսվում է սառնարանային և վերամշակող տնտեսությունների, փոքր սպանդանոցների, կաթի ընդունման և վերամշակման կետերի հիմնում, ինչը հիմնականում պետք է լինի մասնավոր նախաձեռնությունների արդյունք:

ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ մարզում իրականացվում է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցակցության» ծրագիր, որն ընդգրկված է ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. Կայուն զարգացման ռազմավարության մեջ, այն իրականացվելու է 5 տարվա՝ 2011-2015թթ. ընթացքում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 20 մլն ԱՄՆ դոլար: Լոռու մարզից ծրագրի մեջ ընդգրկված են Լորուտ, Դսեղ Չկալով, Քարինջ, Մարց, Շամուտ, Աթան, Ահնիձոր և Դեբետ համայնքները: Նախատեսվում է 3 տարվա ընթացքում յուրաքանչյուր համայնքում իրականացնել 240 հազ. դոլարի ներդրում՝ ներառյալ համայնքի համաֆինանսավորումը: Ակնկալվող արդյունքներն են՝ ավելացնել անասնապահության արտադրողականությունը (ներառյալ խոշոր և մանր եղջերավոր անասունների կաթնատվությունը և մատվությունը), բարձրացնել արոտների օգտագործման արդյունավետությունը, մեծացնել գյուղացիական տնտեսությունների անասնապահությունից ստացված եկամուտները, բարելավել ենթակառուցվածքների և արոտավայրերի վիճակը, նպաստել գյուղտեխնիկայի ձեռքբերման աշխատանքներին և համայնքների բյուջեների ավելացմանը: 2013թ-ին վերոնշյալ համայնքներում ենթակառուցվածքների վրա ներ է դրվել շուրջ 100 մլն դրամ, գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերման վրա՝ 50 մլն դրամ: 2014թ. նախատեսվում է ծրագրի շրջանակներում ներդնել 150 մլն դրամ:

**3.2 Բնապահպանություն**

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2014թ. բնապահպանության ոլորտի համար պահանջված գումարը եղել է **223,998.70** հազար դրամ, ինչն էլ ամբողջությամբ փաստացի պլանավորվել է իրականացնել համայնքային բյուջեների միջոցներով («Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն պետական բյուջեից վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին 2014թ. բնապահպանական ու առողջապահական ծրագրերի կատարման համար հատկացվող գումարներից):

**Լոռու ՄՁԾ-ի 2014թ. համար կարիքների գնահատման և 2014թ. ՏԱՊ-ում ընդգրկված ներդրումային ծրագրերի համադրումը բնապահպանության ոլորտում**  
 հազ. դրամ

Ոլորտը/Ֆինանսավորման աղբյուրը	2014 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի	2014թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջե	ՏԱՊ-ի և ՄՁԾ-ի տարբերությունը (ճեղվածք)
<b>Բնապահպանություն</b>	<b>223,998.70</b>	<b>223,998.4</b>	<b>-0.300</b>
Պետական բյուջե			
Վարկային միջոցներ			
Միջազգային կազմակերպություններ և դոնորներ			
Համայնքների բյուջեներ		<b>223,998.4</b>	
Մասնավոր ներդրումներ			
Այլ աղբյուրներ			

Մարզի բնապահպանական իրավիճակը բարելավելու նպատակով 2014թ. նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Մարզի շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ միջոցառումների ձեռնարկում: «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն պետական բյուջեից վնասակար ազդեցության ենթարկվող մարզի համայնքներին 2014թ. բնապահպանական ու առողջապահական ծրագրերի կատարման համար նախատեսված է հատկացնել.
    - ❖ Ալավերդի համայնքին – 120,000.0 հազ. դրամ
    - ❖ Օձուն համայնքին – 12,498.4 հազ. դրամ
    - ❖ Հաղպատ համայնքին – 25,000.0 հազ. դրամ
    - ❖ Աքորի համայնքին – 28.000.0 հազ. դրամ
    - ❖ Հազվի համայնքին – 50,000.0 հազ. դրամ
    - ❖ Ախթալա համայնքին – 4,500.0 հազ. դրամ
- Ընդամենը՝ - 223,998.4 հազ. դրամ:**

- Ելնելով «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով ընձեռնված հնարավորությունից, միջնորդություն է ներկայացվել ՀՀ բնապահպանության նախարարություն, ոպեսզի Լոռու մարզի Ստեփանավան, Ուրասար («Սագամար» ՓԲԸ՝ շահագործում է Արմանիսի ոսկու-բազմամետաղային հանքավայրը) և Մղարթ, Կողես, Կարմիր Աղեկի համայնքները («Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ՝ շահագործում է Մղարթի ոսկու-բազմամետաղային հանքավայրը) նույնպես ընդգրկվեն վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների ցանկում ու բնապահպանական ծրագրեր իրականացնելու համար պետական բյուջեից սահմանված կարգով ստանան մասնահանումներ: Ակնկալվող բնապահպանական նպատակային գումարները էապես կնպաստեն նշված համայնքների ազգաբնակչության առողջության և շրջակա միջավայրի պահպանման գործում:
- ՀՀ կառավարության 27.10.2011թ. թիվ 1535-Ն որոշմամբ մարզի 64 անտառամերձ համայնքներ ընդգրկվել են անվճար թափուկ վառելափայտ ձեռք բերելու արտոնություններից օգտվող բնակավայրերի ցանկում: Մարզպետարանի կողմից առաջարկվել է, որպեսզի մարզի ևս 6 համայնքներ նույնպես օգտվեն վերը նշված արտոնությունից:
- Աջակցել «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամին 2009-2013թթ. ընթացքում շուրջ 422 հա հինմադրված անտառմշակույթների լրացման, խնամքի և 2014թ. մարզի այլ համայնքների տարածքներում նախատեսվող շուրջ 100 հա անտառտնկման աշխատանքների կազմակերպման հարցում:
- Ապօրինի ծառահատումները կանխարգելելու նպատակով համագործակցել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի, ՀՀ բնապահպանության նախարարության ԲՊՏ Լոռու տարածքային բաժնի, ոստիկանության Լոռու մարզային վարչության և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ:
- «Հայանտառ» ՊՈԱԿ-ի, մարզում գործող անտառտնտեսությունների հետ ամփոփել բնափայտի պատրաստման պետական առաջադրանքների և անտառվերականգնման վերաբերյալ տվյալները:
- Կազմակերպել այցելություններ Թեղուտի հանքավայր՝ շահագործման հետևանքով իրականացվող ծառահատումների և առկա բնապահպանական ծրագրերի կատարման վիճակի ուսումնասիրության նպատակով: Հաստատված ծրագրերի համաձայն «Թեղուտ» ՓԲԸ-ն պարտավորվել է կատարել 714 հա անտառտնկման աշխատանքներ, որից մինչ այժմ իրականացրել է շուրջ 378 հա:
- Աջակցել վերոնշյալ ծրագրի շրջանակներում հինմադրված անտառմշակույթների լրացման, խնամքի և 2014թ. ընթացքում նախատեսվող անտառտնկման աշխատանքների կազմակերպման հարցում:
- Սերտ համագործակցել մարզի Օրիուս բնապահպանական տեղեկատվական կենտրոնների, բնապահպանական հասարակական կազմակերպությունների և անհատ քաղաքացիների հետ:



- «Թռչկան» ջրվեժի՝ բնության հուշարձանի հարևանությամբ, WWF ծրագրով 2013թ. իրականացվել են ցանկապատման և անտառապատման աշխատանքներ: 2014թ. կիրականացվի տնկված անտառմշակույթների խնամքի և լրացման աշխատանքներ:
- «Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղի 59.8 հա տարածքում WWF ծրագրով 2013թ. իրականացվել են անտառապատման աշխատանքներ: 2014թ. կիրականացվի տնկված անտառմշակույթների խնամքի և լրացման աշխատանքներ:
- «Թափոնների կառավարում-ԵՀԳԳ՝ Արևելք» ծրագրի շրջանակներում «Ախթալա ԼՀԿ՝ ՓԲԸ-ի կոնսերվացված «Նազիկ» պոչամբարի 1հա տարածքում իրականացվել են ռեկուլտիվացիոն և կանաչապատման աշխատանքներ: 2013թ. իրականացված մոնիտորինգի արդյունքները փաստել են տնկիների 95%-անոց կաջողականություն: 2014թ. գարնանը տվյալ տարածքում նախատեսվում է իրականացնել մոնիտորինգի և խնամքի, անհրաժեշտության դեպքում նաև լրացման աշխատանքներ:
- «Թափոնների կառավարում-ԵՀԳԳ՝ Արևելք» ծրագրի շրջանակներում 2014թ. նախատեսվում է անցկացնել մարզում առկա պոչամբարների գույքագրման աշխատանքներ, որի արդյունքում կկատարվի նրանցից առաջացող հնարավոր բնապահպանական ու առողջապահական ռիսկերի գնահատում, որտեղ կտրվեն նաև տվյալ ռիսկերի վերացմանն ու մեղմացմանն ուղղված համապատասխան առաջարկություններ:
- Որպես «Թափոնների կառավարում -ԵՀԳԳ՝ Արևելք» ծրագրի շարունակություն, ներկայումս Հայ-Գերմանական Ֆինանսական Համագործակցության շրջանակներում իրականացվում է «Կոշտ կենցաղային աղբի համակողմանի կառավարման հայեցակարգ, ք. Վանաձոր» ծրագիրը: Ծրագրի փորձագետների կողմից նոր աղբավայր կառուցելու համար հավանության է արժանացել Քարաձոր համայնքի հարակից տարածքը: Նոր եվրոպական չափանիշներին համապատասխան աղբավայրի կառուցման դեպքում, ծրագիրը ենթադրում էր, որ աղբավայրից կօգտվեն ոչ միայն Վանաձոր և Սպիտակ քաղաքները, այլև Գուգարքի և Սպիտակի տարածաշրջանի գրեթե բոլոր գյուղական համայնքները: Ներկայումս ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից ծրագրին առաջարկվել է դիտարկել ոչ միայն վերը նշված տարածաշրջանները, այլ ամբողջ մարզը և ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքը: Նոր աղբավայրը կլուծի նաև համայնքներում տարերայնորեն առաջացած ապօրինի աղբավայրերի լիկվիդացման հարցը:

**4,ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ**

Համաձայն Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի, քաղաքաշինության ոլորտում (բնակարանաշինություն և բնակարանային տնտեսություն ու բարեկարգում) 2014թ. մարզում նախատեսված էր իրականացնել 3,703,193.0 հազ. դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում՝

- **Բնակարանային օբյեկտների բարելավում՝** 3,650,000.0 հազ. դրամ
- **Բազմաբնակարան շենքերի պահպանման միջոցառումներ՝** 20,000.0 հազ. դրամ
- **Սոդանքային աղետի դեմ պայքարի միջոցառումներ՝** 30,193.0 հազ. դրամ
- **Սոդանքային տարածքների բնակելի տների տեխնիկական վիճակի հետազննում** 3,000.0 հազ. դրամ

2014թ. պլանավորվել է 1,060,000.0 հազ. դրամի, այդ թվում 200,000.0 հազ. դրամը՝ պետբյուջեով, և 860,000.0 հազ. դրամը մասնավոր միջոցներով:

**Լոռու ՄՁԾ-ի 2014թ. համար կարիքների գնահատման և 2014թ. ՏԱՊ-ում ընդգրկված ներդրումային ծրագրերի համադրումը քաղաքաշինության ոլորտում**  
 հազ. դրամ

Ոլորտը/Ֆինանսավորման աղբյուրը	2014 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի	2014թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջե	ՏԱՊ-ի և ՄՁԾ-ի տարբերությունը (ճեղվածք)
<b>Քաղաքաշինություն</b>	<b>3,703,193.00</b>	<b>1,060,000.00</b>	<b>-2,643,193.00</b>
Պետական բյուջե		200,000.00	
Վարկային միջոցներ			
Միջազգային կազմակերպություններ և դոնորներ			
Համայնքների բյուջեներ			
Մասնավոր ներդրումներ		860,000.00	
Այլ աղբյուրներ			

**Բնակարանաշինության ոլորտում**

2014 թվականին

- ✓ ՀՀ պետ. բյուջեից նախատեսվել է 200.0 մլն դրամ՝ Վանաձորում բնակելի շենքերի վերանորոգում (48 բնակարան) կատարելու նպատակով:
- ✓ Մասնավոր ընկերության 860.0 մլն դրամով Վանաձորում կկառուցվի բնակելի շենք:

**5. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ**

Համաձայն Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի, 2014 թվականին ենթակառուցվածքների ոլորտում մարզում նախատեսված էր իրականացնել **8,401,223.0** հազ. դրամ ծավալով աշխատանքներ, փաստացի 2014թ. պլանավորվել է շուրջ **4,735,151.717** հազ. դրամի աշխատանքներ, այդ թվում՝ **381,097.70** հազ. դրամը ՀՀ պետբյուջեի միջոցներ, **4,252,423.00** հազ. դրամը՝ վարկային միջոցներ և **101,631.0** հազ. դրամը՝ համայնքային բյուջեի միջոցներ:

**Լոռու ՄՁԾ-ի 2014թ. համար կարիքների գնահատման և 2014թ. ՏԱՊ-ում ընդգրկված ներդրումային ծրագրերի համադրումը ենթակառուցվածքների ոլորտում**  
 հազար դրամ

Ոլորտը/ Ֆինանսավորման աղբյուրը	2014 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի	Ջրամատակարարում	Ճանապարհաշինություն	Գազամատակարարում	2014թ. ՏԱՊ-ով նախատես- ված հրատեսա- կան բյուջե	Ջրամատակարարում	Ճանապարհաշինություն	Գազամատակարարում	Ճեղքվածք
Ենթակառուցվածքներ	8,401,223.0	2,941,423.0	5,198,000.0	261.800.0	4,735,151.72	1,349,895.916	-4,754,167.199	-261,800.000	-3,666,071.283
Պետական բյուջե					381,097.0	0.0	381,097.0	0.0	
Վարկային միջոցներ					4,252,423.0	4,252,423.0			
Համայնքային ներդրումներ					101,631.02	38,895.92			

**5.1. Ճանապարհաշինություն**

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2014թ. ճանապարհաշինության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **5,198,000.0** հազ. դրամ, սակայն բոլոր աղբյուրներով փաստացի պլանավորվել է կատարել **443,832.80** հազ. դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում՝ **381,097.7** հազ. դրամը՝ ՀՀ պետբյուջեի միջոցներով, (պատվիրատու՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն) և **62,735.1** հազ. դրամը՝ համայնքների համայնքային բյուջեների միջոցներով:

**Լոռու ՄՁԾ-ի 2014թ. համար կարիքների գնահատման և 2014թ. ՏԱՊ-ում ընդգրկված ներդրումային ծրագրերի համադրումը ճանապարհաշինության ոլորտում**  
 հազ. դրամ

Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	2014 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի	2014թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջե	ՏԱՊ-ի և ՄՁԾ-ի տարբերությունը (ճեղքվածք)
<b>Ճանապարհաշինություն</b>	<b>5,198,000.000</b>	<b>443,832.801</b>	<b>-4,754,167.199</b>
Պետական բյուջե		<b>381,097.70</b>	
Վարկային միջոցներ			
Միջազգային կազմակերպություններ և դոնորներ			
Համայնքների բյուջեներ		<b>62,735.10</b>	
Մասնավոր ներդրումներ			
Այլ աղբյուրներ			

2014թ. պետբյուջեի **298.098** մլն միջոցներով պլանավորվել է իրականացնել.

**• տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում, այդ թվում՝**

✓	Ա/ճ Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման, կմ32+240 կամուրջի հիմնանորոգում	92.097 մլն դրամ
✓	Ա/ճ Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման, կմ32 թունելի հիմնանորոգում	138.00 մլն դրամ
✓	Պուշկինի լեռնանցքի թունելի հիմնանորոգում	83.00 մլն դրամ

**• Մարզային նշանակության ա/ճանապարհների պահպանման և շահագործման նպատակով 2014թ. պետբյուջեից հարկացվել է ընդամենը 68.001 մլն դրամ:**

2014 թվականին 26 համայնքներ իրենց բյուջեներից համայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման համար պլանավորել են ընդամենը **62,735.1** հազ. դրամի ներդրում:

**5.2. Ջրամատակարարում ու ջրահեռացում**

Ջրամատակարարումը մարզում իրականացվում է «Հայջրմուղկոյուղի» և «Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲ ընկերությունների միջոցով և տեղական ինքնկառավարման մարմինների կողմից: Խմելու ջուրը ռազմավարական ռեսուրս է, որը չի մատակարարվում շատ համայնքներում, չնայած որ մարզի շատ բնակավայրերում գոյություն ունեն ջրի բնական պաշարներ:

Լոռու մարզի կարևոր հարստություններից են հանդիսանում խմելու համար պիտանի, բարձր որակի ջրի մեծ պաշարները, որը ներկա իրավիճակում գերազանցում են անհրաժեշտ պահանջարկը: Ջրամատակարարման համակարգը մարզի բնակչությանը և արդյունաբերությանը տարեկան տրամադրում է մոտ 17.1 մլն մ<sup>3</sup> խմելու ջուր, որը սպառողին է հասցվում ինքնահոս եղանակով և պոմպակայանների միջոցով: Մարզի ջրային ցանցի երկարությունը 3395.23 կմ է, ջրի ծախսը՝ 1250 լիտր/վրկ, որից ճնշումային՝ 520 լիտր/վրկ: Մարզի 7 քաղաքների և 56 գյուղերի ջրամատակարարումն ու ջրահեռացումը (Ջ և Ջ) կատարվում է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ «Հյուսիս արևելյան»

տարածքային մասնաճյուղի և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի միջոցով: Մարզի մյուս բնակավայրերի, հատկապես գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերը հանդիսանում են համայնքային սեփականություն և գտնվում են խիստ անբարվոք ու մաշված վիճակում, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակչության ջրամատակարարման հարցում:

«Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող Վանաձոր քաղաքի և 16 գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման բարելավումը իրականացվում է գերմանական վերականգնման բանկի (KfW) և ՀՀ կառավարության կողմից համաֆինանսավորվող ծրագրի միջոցով՝ 2014թ.-ին նախատեսված է իրականացնել **1,442.423** մլն դրամի աշխատանք:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող 38 համայնքների խմելու ջրի մատակարարում և ջրահեռացման համակարգերի աշխատանքների բարելավման աշխատանքները իրականացվում են «Եվրոպական վերակառուցման» և «Ասիական բանկի» ծրագրով, որի համար 2014թ.-ին նախատեսված է **2,810.0** մլն դրամ:

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2014թ. ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի համար պահանջվող գումարը **2,941,423.0** հազ. դրամ է, սակայն բոլոր աղբյուրներով փաստացի պլանավորվել է կատարել **4,291,318.916** հազ. դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում՝ **4,252,423.00** հազար դրամը վարկային միջոցներից և **38,895.92** հազ. դրամը՝ համայնքային բյուջեներից:

**Լոռու ՄՁԾ-ի 2014թ. համար կարիքների գնահատման և 2014թ. ՏԱՊ-ում ընդգրկված ներդրումային ծրագրերի համադրումը ջրամատակարարման ոլորտում**  
 հազ. դրամ

Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	2014 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի	2014թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջե	ՏԱՊ-ի և ՄՁԾ-ի տարբերությունը (ճեղքվածք)
<b>Ջրամատակարարում</b>	<b>2,941,423.00</b>	<b>4,291,318.916</b>	<b>1,349,895.916</b>
Պետական բյուջե			
Վարկային միջոցներ		<b>4,252,423.00</b>	
Միջազգային կազմակերպություններ և դոնորներ			
Համայնքների բյուջեներ		<b>38,895.92</b>	
Մասնավոր ներդրումներ			
Այլ աղբյուրներ			

➢ Վարկային միջոցներով՝ ընդամենը **4,252.423** մլն դրամ

KfW-Գերմանական վարկային ծրագիր «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող համայնքներում ջրամատակարարման բաշխիչ ցանցերի կառուցում	<b>1,442.423</b> մլն դրամ
«Եվրոպական վերակառուցման» և «Ասիական բանկի» ծրագրեր «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող 38 համայնքների խմելու ջրի մատակարարում և ջրահեռացման համակարգերի աշխատանքների բարելավում	<b>2,810.00</b> մլն դրամ

➢ Համայնքային բյուջեների միջոցներից **38,895.92** հազ. դրամ՝

<p>Մարզի 30 համայնքներ իրենց ֆոնդային բյուջեներում 2014թ.-ին նախատեսել են 38, 895.92 հազար դրամ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի աշխատանքների բարելավման նպատակով</p>	<p><b>38.896</b> մլն դրամ</p>
--	-------------------------------

**5.3. Գազամատակարարում**

Գազաֆիկացումը մարզի զարգացման կարևոր նախապայմաններից մեկն է: Երկարատև ձմեռները և այլընտրանքային էներգիայի աղբյուրների բացակայությունը ընդգծում են բնական գազի մատակարարման հրատապությունը համայնքների համար: Համայնքներում գերակա խնդիր է համարվում գազամատակարարման ցանցի կառուցումը: Գազի առկայությունը յուրաքանչյուր տնային տնտեսությունում նշանակում է շուրջ 10-12 մ<sup>3</sup> վառելափայտի խնայողություն, որն իր հերթին կնպաստի անտառահատումների, էկոլոգիայի և դրանից բխող պրոբլեմների լուծմանը: Ավելի էժան վառելիքի առկայությունը կարող է նպաստել սահմանամերձ համայնքների զարգացմանը, ինչը հանրապետության համար ունի ռազմավարական նշանակություն: «Հայրուսգազարդ»-ի ներդրումները բավարար չեն ապահովելու համար գազամատակարարումը նույնիսկ հիմնական գազատարին կից համայնքներում, քանի որ նման միացումները փոքր համայնքներին տնտեսապես ձեռնտու չեն:

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2014թ. գազաֆիկացման ոլորտի համար պահանջվող գումարը եղել է 261,800.0 հազ. դրամ է, այդ թվում՝ գազաֆիկացման աշխատանքներ մարզի Ձորագյուղ (57.00 մլն դրամ), Գոգավան (57.00 մլն դրամ), Նովոսելցովո (57.00 մլն դրամ), Չկալով (57.00 մլն դրամ) և Կաթնաղբյուր (57.00 մլն դրամ) համայնքներում: ՏԱՊ-ի մշակման ժամանակ դեռևս գազաֆիկացման ոլորտում փաստացի պլանավորված աշխատանք չկա, բայց այդ ուղղությամբ բանակցությունները համաքյնքների և ծավալով աշխատանքներ: ՀՀ Կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակի (ՀՀ ԿԱ ԳՏՏԶ ԾԻԳ) միջև շարունակվում են:

**6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

**6.1 Տարածքային կառավարում**

Տարածքային կառավարման բաղադրիչի նպատակն է բարելավել պետական կառավարումը մարզում՝ ապահովելով մարզպետարանի, ՏԻՄ-երի և ՀԳՄ տարածքային ծառայությունների գործունեության արդյունավետության բարձրացումը:

Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է՝

- ✓ ապահովել մարզպետարանի տեղեկատվական և կառուցվածքային կառավարչական, համակարգերի կատարելագործումը, բարձրացնել մարզպետարանի, ՏԻՄ-երի և ՀԳՄ տարածքային ծառայությունների համագործակցության մակարդակը,
- ✓ հստակեցնել, պարզեցնել և արդյունավետ դարձնել մարզպետարանի կողմից ՏԻՄ-երին տրամադրող մեթոդաբանական օգնությունը, որը հնարավորություն կտա հաշվի առնել ՏԻՄ-երի կարիքները և նրանց տրամադրել անհրաժեշտ մեթոդական, գործնական

օգնություն և բարելավել նրանց կողմից իրականացվող գործառույթների ու կայացվող որոշումների նկատմամբ մարզպետի կողմից իրականացող իրավական և մասնագիտական վերահսկողության մակարդակը:

- ✓ շարունակել իրականացնել մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վերապատրաստումները և ատեստավորումները,
- ✓ ձեռնարկել միջոցներ մարզպետարանի գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու, ինչպես նաև մարզի զարգացման պլանավորման բնագավառում հանրային ու հասարակական սեկտորների գործակցության ուղղությամբ,
- ✓ ակտիվացնել մարզային խորհրդի դերը, հաշվի առնելով, որ այն կարևոր հարթակ է մարզպետարանի և ՏԻՄ-երի միջև տեղեկատվության փոխանակման, առկա հիմախնդիրների քննարկման, գերակայությունների սահմանման, մարզի բնակչության բոլոր հատվածների հետ անմիջական կապ հաստատելու, ինչպես նաև զարգացման պլանավորման ու ծրագրերի իրականացման հետ կապված գործընթացներում:

Անհրաժեշտ է կարևորել բոլոր համայնքների համակարգիչներ ունենալու և ինտերնետ կապով ապահովվածության խնդիրը, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել համայնքների կողմից համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) ներդրման, մարզպետարանի և մարզի բոլոր համայնքների միջև էլեկտրոնային կապ ստեղծելու ուղղությամբ, շարունակել մարզպետարանի և մարզի համայնքների միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության՝ ՀԿՏՀ-«Mulberry» համակարգի ներդրման աշխատանքները:

Պետք է շարունակել խորհրդատվական աջակցություն ցուցաբերել համայնքների ղեկավարներին աշխատակազմերի արդյունավետ գործող և օպտիմալ կառուցվածքներ սահմանելու, ինչպես նաև դրանց համապատասխան համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու ուղղությամբ:

**6.2. Տեղական ինքնակառավարում և ապակենտրոնացում**

Անհրաժեշտ է զարգացնել համայնքային ծառայության համակարգը, բարձրացնել տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունները, ՏԻՄ-երի գործունեության մասին հասարակության իրազեկության աստիճանը, ապահովել քաղաքացիական հասարակության մասնակցությունը հանրային կարևորություն ներկայացնող ծրագրերի քննարկման, մշակման, իրականացման և մոնիտորինգի գործընթացներում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը հատկապես լուրջ դժվարությունների է հանդիպում փոքր համայնքներում, որոնք զրկված են բավարար ֆինանսական միջոցներից և որտեղ առավել ցածր մակարդակի վրա են գտնվում բյուջեների հավաքագրման ցուցանիշները, 2014թ.-ի ՄԶԾ ամենակարևոր խնդիրներից մեկը ՏԻՄ-երի բյուջետային կարողությունների զարգացումը և տեղական եկամուտների հավաքագրման աճի ապահովումն է:

Համայնքային ծառայության համակարգի կայունությունն ապահովելու համար անհրաժեշտ է շարունակել իրականացնել համայնքային ծառայողների վերապատրաստումները, որոնք պետք է հիմնականում ուղղված լինեն կառավարման հմտությունների ու ունակությունների բարձրացման, ՏԻՄ-երի կողմից ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառման կարողությունների զարգացմանը, ինչպես նաև բյուջետավարման, համայնքային և մարզային զարգացման պլանավորման, մոնիտորինգի և գնահատման, ինչպես նաև բնակչությանը որակյալ ծառայությունների մատուցման բնագավառներին :

2014.թ.-ին անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել համայնքների զարգացման քառամյա ծրագրերի և համայնքային բյուջեների կազմման, բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունների հաստատման հրապարակայնության գործընթացի վրա, հաշվի առնելով տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության համար հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման ժամանակ առկա հիմնախնդիրները, համայնքի բնակչության ցանկությունները և իրականացնել քաղաքացիների մասնակցության խթանմանն ուղղված փորձնական ծրագրեր:

Հաշվի առնելով այն իրողությունը, որ դեռևս ձևավորված չէ բնակչության ակտիվ մասնակցությունը համայնքների հիմնախնդիրներ քննարկման և հաստատման գործընթացում, նպատակահարմար է մարզի տարածքում գոյություն ունեցող առավել ակտիվ հասարակական կազմակերպությունների մասնակցությունը ՏԻՄ-երի կողմից կայացվող որոշումներին:

Անհրաժեշտ է իրականացնել հարցումներ և ուսումնասիրություններ՝ պարզելու համար բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի և մատչելիության վերաբերյալ, որը հիմք կհանդիսանա սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման համար:

**6.3. Քաղաքացիական հասարակություն**

Քաղաքացիական հասարակության կայացման ու որոշումների ընդունման գործընթացում բնակչության և քաղաքացիական ակտիվ խմբերի մասնակցության ապահովման, կառավարման գործընթացներում հասարակության տարբեր խավերի մասնակցությունը համայնքային և մարզային զարգացման ծրագրերի մշակման և իրականացման, համայնքների ղեկավարների մասնակցային գործընթացները արդյունավետ համակարգելու կառավարչական հմտությունները զարգացնելու, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների առավել թափանցիկ գործունեությունն ապահովելու նպատակով, մարզպետարանի աշխատակազմի, համայնքների ղեկավարների, մարզի հասարակական կազմակերպությունների ջանքերով 2014թ.-ի ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- Մարզի տարածքում գործող ԶԼՄ-ների միջոցով պարբերաբար հաղորդումներ հեռարձակել՝ ներկայացնելով մարզպետի, մարզպետարանի և մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեությունը, գոյություն ունեցող հիմնախնդիրները և իրականացվող ծրագրերը, պարբերաբար հրապարակել առավել լայն կիրառություն ունեցող օրենքներն և նորմատիվ իրավական ակտերը, դրանցում կատարվող փոփոխությունները՝ տալով պարզաբանումներ և մեկնաբանություններ:
- Պարբերաբար և համակարգված ձևով կազմակերպել մարզպետի, նրա տեղակալների և մարզպետարանի ղեկավարների այցելությունները համայնքներ, որոնք պետք է ուղեկցվեն տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքի բնակչության հետ հանդիպում-քննարկումներով, որոնց ժամանակ «դեմ առ դեմ» սկզբունքով մարզի պաշտոնատար անձանցից բնակչությունը հնարավորություն կունենա ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և բացատրություններ:
- Անհրաժեշտության դեպքում մարզի հեռուստաընկերությունների միջոցով կազմակերպել ուղիղ եթերներ, հանրությունը հնարավորություն ընձեռնելով իրենց հուզող հարցերը ուղիղ կապով իրավասու անձին ուղղելու եւ պատասխանը անմիջապես լսելու համար:
- Մարզի զարգացման ծրագրի իրականացման ընթացքի, ինչպես նաև՝ մարզի տարածքում պետական բյուջեի և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի մասին պատրաստել հանրամատչելի տեղեկատվական



թերթիկներ և դրանք առաքել բոլոր համայնքներին շրջաբերականների, ինտերնետային կայքէջի, մարզում գործող ՋԼՄ-ների միջոցով:

- Հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին մասնակից դարձնել մարզխորհրդի նիստերին, մարզպետարանում հրավիրվող տարբեր քննարկումներին, հասարակական լուսումներին, ինչպես նաև մարզպետարանում ձևավորվող ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքներին:
- Պարբերաբար իրականացնել մարզպետարանի ինտերնետային կայքէջի թարմացման աշխատանքներ, հանրային իրազեկման նպատակով կայքում տեղադրել մարզպետի որոշումներն ու կարգադրությունները, ՏԻՄ-երի որոշումները, առանձին բաժիններում տեղադրել մարզային բնույթի տարբեր խնդիրներին վերաբերող տեղեկատվություն:
- Հասարակական կազմակերպությունների և համայնքի ակտիվ հասարակական խմբերի ներկայացուցիչներին հրավիրել համայնքի ավագանու նիստերին:
- Ուշադրություն դարձնել համայնքապետարաններում և համայնքի բնակչության համար առավել տեսանելի վայրերում տեղեկատվական ցուցատախտակների առկայությանը, համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու որոշումների վերաբերյալ համայնքների բնակչությանը իրազեկելու նպատակով դրանք տեղադրել մարզպետարանի կամ համայնքապետարանների ինտերնետային կայք էջերում, մեկական օրինակ փակցնել համայնքապետարաններում առկա տեղեկատվական տախտակներին և հանրության համար առավել մատչելի վայրերում:
- Տարվա ընթացքում ըստ անհրաժեշտության հրապարակել բոլոր այն որոշումները, որոնք վերաբերում են պետության կամ միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող սերմացուների, վառելիքի, պարարտանյութերի և այլ նյութերի բաշխմանը:
- Անհրաժեշտությունից ելնելով հասարակական կազմակերպությունների ջանքերով կազմակերպել բնակչության իրազեկման ծրագրեր:

11) Շարունակել աշխատանքները՝ մարզի համայնքապետարաններում ինտերնետային կայքէջերի ստեղծման և դրանց կանոնավոր գործունեության ուղղությամբ

Պ Լ Ա Ն

«Հ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ 2014-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ «ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ԲԱԺՆԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունք	Կատարողը	Համակատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը	Հղում
1	2	3	4	5	6	7
1. Մարզպետարանի քաղաքացիական ծառայողների վերապատրաստում և ատեստավորում	Մարզում պետական կառավարման (տարածքային կառավարման) արդյունավետության բարձրացում	Անձնակազմի կառավարման բաժին	Մարզպետարանի համապատասխան վարչություններ, բաժիններ	Տարվա ընթացքում	Պետական բյուջե	Ըստ ՔԾԽ-ի ծրագրի
2. Վարչական հսկողություն մարզի 37 համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ	ՏԻ մարմինների իրականացրած լիազորությունների համապատասխանեցում գործող օրենսդրությանը և վարչական հսկողություն արդյունքների ներկայացում ՀՀ տարածքային կառավարման նախարարություն		ՀՀ Լոռու մարզպետի կարգադրությամբ կազմված հանձնաժողով	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77.2 հոդված, ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված ամենամյա աշխատանքային ծրագրի
3. Մարզպետարանի կողմից ՏԻՄ-երին ցուցաբերվող մեթոդական օգնության կարիքների մոնիտորինգի անցկացում	Մարզպետարանի կողմից ՏԻՄ-երին ցուցաբերվող մեթոդական օգնության հստակեցում, պարզեցում և արդյունավետության բարձրացում	ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն	Մարզպետարանի համապատասխան վարչություններ, բաժիններ	Երրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կառավարության 06.02.2014թ. «ՀՀ Լոռու մարզի 2014-2017 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N113-Ն որոշում
4. Համանքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (շենքերի, շինությունների) գույքային իրավունքների պետական գրանցումների աշխատանքների շարունակում	Համանքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (շենքերի, շինությունների) գույքային իրավունքների իրավական պաշտպանվածության մակարդակի բարձրացում	Մարզի համայնքների ղեկավարներ	ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն	Տարվա ընթացքում	Համայնքային բյուջեներ	ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 27.12.2010թ. <b>01\16\7605-10</b> հանձնարարական

<p>5. ՏԻՄ-երի գործունեության արդյունավետության բարձրացում՝</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Աջակցություն վերապատրաստման ենթակա համայնքային ծառայողների վերապատրաստման կազմակերպման աշխատանքներին</li> <li>✓ Համայնքներում հանրային ծառայություններ մատուցող շահագրգիռ մարմիններին (կազմակերպություններին) անհրաժեշտ աջակցության ցուցաբերում</li> <li>✓ Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անդամների վերապատրաստման կազմակերպում</li> <li>✓ Համայնքային բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների աճի ապահովում</li> <li>✓ համայնքների ղեկավարի աշխատակազմերի կողմից համակարգչ. տեխնիկայի ու ծրագրային ապահովման ձեռքբերում և շահագործում</li> </ul>	<p>Վերապատրաստված համայնքային ծառայողները կնպաստեն ՏԻՄ-երի գործունեության արդյունավետության բարձրացմանը:</p> <p>Մատուցվող հանրային ծառայությունների որակի և մատչելիության բարձրացում:</p> <p>Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատանքների բարելավում</p> <p>Համայնքների հիմնախնդիրների լուծման համար ֆինանսական միջոցների առկայություն և համայնքների կառավարման արդյունավետության բարձրացում</p> <p>Մարզպետարանի և ՏԻՄ-երի միջև համագործակցության մակարդակի բարձրացում</p>	<p>ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն</p> <p>Մարզի համայնքների ղեկավարներ</p> <p>ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն</p> <p>Մարզի համայնքների ղեկավարներ</p> <p>Մարզի համայնքների ղեկավարներ</p> <p>Մարզի համայնքների ղեկավարներ</p>	<p>Մարզի համայնքների ղեկավարներ</p> <p>Մարզպետարանի համապատասխան վարչություններ, բաժիններ</p> <p>Մարզի համայնքների ղեկավարներ</p> <p>Մարզպետարանի համապատասխան վարչություններ, բաժիններ</p> <p>ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն</p>	<p>Տարվա ընթացքում</p> <p>Տարվա ընթացքում</p> <p>Տարվա ընթացքում</p> <p>Տարվա ընթացքում</p> <p>Տարվա ընթացքում</p> <p>Տարվա ընթացքում</p>	<p>Պետական բյուջե</p> <p>Ֆինանսավորում չի պահանջվում</p> <p>Ֆինանսավորում չի պահանջվում</p> <p>Ֆինանսավորում չի պահանջվում</p> <p>Ֆինանսավորում չի պահանջվում</p> <p>Համայնքային բյուջեներ</p>	<p>ՀՀ կառավարության 06.02.2014թ. «ՀՀ Լոռու մարզի 2014-2017 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N113-Ն որոշում</p>
--	--	---	--	---	--	--

<p>6. Համայնքների բյուջեների կատարման հաշվետվությունները ավագանուն ներկայացնելիս մարզպետի, մարզպետարանի պատասխանատու աշխատակիցների մասնակցություն</p>	<p>ՏԻՄ-երի հաշվետվողականության և պատասխանատվության բարձրացում</p>	<p>Մարզի համայնքների ղեկավարներ</p>	<p>ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն</p>	<p>Տարվա ընթացքում</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>	<p>ՀՀ կառավարության 06.02.2014թ. «ՀՀ Լոռու մարզի 2014-2017 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N113-Ն որոշում</p>
<p>7. ՏԻՄ –երի գործունեության հրապարակայնության և թափանցիկության ապահովում</p>	<p>Ապահովել բնակչության առավել արդյունավետ մասնակցությունը տեղական նշանակության հարցերի լուծմանը</p>	<p>Մարզի համայնքների ղեկավարներ</p>	<p>ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն</p>	<p>Տարվա ընթացքում</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>	<p>ՀՀ կառավարության 06.02.2014թ. «ՀՀ Լոռու մարզի 2014-2017 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N113-Ն որոշում</p>
<p>8. Հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին մասնակից դարձնել մարզխորհրդի նիստերին, ինչպես մարզպետարանում ձևավորվող ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքներին</p>	<p>Մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի գործունեության հրապարակայնության և թափանցիկության ապահովում</p>	<p>Տեղեկատվության և հասարակության հետ կապերի բաժին</p>	<p>Մարզպետարանի համապատասխան վարչություններ, բաժիններ</p>	<p>Տարվա ընթացքում</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>	<p>ՀՀ կառավարության 06.02.2014թ. «ՀՀ Լոռու մարզի 2014-2017 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N113-Ն որոշում</p>

**7. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ**

Արտաքին կապերի բնագավառում Լոռու մարզում 2014թ-ին նախատեսվում են հետևյալ աշխատանքները, ուղղված մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

ՀՀ Լոռու մարզի եւ Ֆրանսիայի հանրապետության Պրովանս - Ալպ Կոտ դ'Ազյուր (ՊԱԿԱ) ռեգիոնի միջև 2012թ-ի դեկտեմբերի 10-ին Ֆրանսիայի Մարսել քաղաքում կնքված «2012-2014թթ համագործակցության համաձայնագրի» շրջանակներում Լոռու մարզում նախատեսվում են իրականացնել մի շարք ծրագրեր հետևյալ ուղղություններով՝

- Ֆրանկոֆոնիայի զարգացում (կրթություն եւ մշակույթ)
- Զբոսաշրջության զարգացում (այդ թվում՝ գյուղական տուրիզմ)
- Տնտեսության զարգացում (այդ թվում՝ անասնապահություն-անասնաբուծություն)
- Համերաշխություն (այդ թվում՝ առողջապահություն եւ սոցիալական ապահովություն)

Մասնավորապես 2013-2014թթ. նախատեսվում են՝

- ❖ Ստեղծել զբոսաշրջության մարզային կենտրոն Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանում
- ❖ Սպիտակի տարածաշրջանի Լուսադբյուր գյուղում ստեղծել ավանդական կամ փորձարարական ոչխարաբուծական ֆերմա
- ❖ Ֆրանսիայի ՊԱԿԱ ռեգիոն կմեկնեն ագրոտուրիզմի, անասնաբուծության եւ տուրիզմի բնագավառների մասնագետների 3 խումբ, որոնք ուսումնասիրելով ֆրանսիական փորձը այդ բնագավառներում կփորձեն Լոռու մարզում կիրառել այն եւ վերապատրաստել նոր մասնագետներ (ՀՀ ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղ, Ստեփանավանի գյուղատնտեսական քոլեջ)
- ❖ Ֆրանսիական ԳՐԵՖ կազմակերպությունը կշարունակի ֆրանսերեն լեզվի դասավանդողների վերապատրաստման դասընթացներ ՎՊՄԻ-ում, Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի Վանաձորի մասնաճյուղում, մարզի այն կրթական հաստատություններում, որտեղ դասավանդվում է ֆրանսերեն
- ❖ DSF ֆրանսիական կազմակերպության ներքո ստեղծված «Նոենի» հկ-ն մինչև 2013թ-ի հոկտեմբեր կշարունակի իրականացնել «Մոր եւ մանկան պաշտպանություն, ուսուցանողների ուսուցում եւ կատարելագործում» ծրագիրը Վանաձոր եւ Ամրակից համայնքներում:
- ❖ Ֆրանսիայի ՊԱԿԱ ռեգիոնի ֆինանսավորմամբ «Հույս Հայաստանի համար» կազմակերպության միջոցով նախատեսվում է Սպիտակ քաղաքում որոշակի աշխատանքների իրականացում՝ ատամնաբուժարանի վերազինում, մշակույթի տան եւ թիվ 2 դպրոցի մասնակի վերանորոգումներ եւ ֆրանսերենի դասագրքերի ձեռքբերում
- ❖ «Երուսաղեմի սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամը, որը գործում է Սպիտակ քաղաքում, 2013թ.-ին կշարունակի առողջապահական հիմնարկների հետ իրականացնել բարեգործական ծրագրեր:

2011թ-ի նոյեմբերի 24-ին Բուրկինա Ֆասոյում կայացած **Ֆրանկոֆոն ռեգիոնների միջազգային ասոցիացիայի** (AIER) համաժողովին, Լոռու մարզն ընտրվել է «Ֆրանկոֆոն ռեգիոնների միջազգային ասոցիացիա»-ի լիիրավ անդամ: Այս համագործակցության շրջանակներում «Ֆրանսիական օրեր Հայաստանում» միամսյակին նվիրված, 2014թ-ի մարտի 15-ից ապրիլի 15-ը նախատեսվում են Լոռու մարզի կրթական հաստատություններում, Վանաձոր, Ստեփանավան եւ Ախթալա քաղաքներում կրթական եւ մշակութային միջոցառումների իրականացում:

Եվրոպական Տարածաշրջանային Ասամբլեային (ԵվՏԱ) Լոռու մարզի 2010թ-ի նոյեմբերի 11-ից անդամակցությունն ակնկալում է Եվրոմիության և AER-ի հետ տարածքների զարգացմանն ուղղված համատեղ ծրագրերի իրականացում:

2014թ-ի ԵվՏԱ-ի առաջնահերթություններն են

- ✓ Համախմբվածության քաղաքականություն
- ✓ Կլիմայի փոփոխություն եւ էներգետիկ քաղաքականություն
- ✓ Տնտեսական զարգացում, ձեռնարկատիրություն եւ նորարարություն
- ✓ Գյուղատնտեսություն եւ գյուղերի զարգացում
- 2014թ-ին կշարունակվի Հայ-Գերմանական համագործակցության շրջանակներում KFW գերմանական վարկային ծրագրով «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող համայնքներում ջրամատակարարման բաշխիչ ցանցերի կառուցում:
- 2014թ-ին կշարունակվի «Եվրոպական վերակառուցում» եւ Ասիական բանկի ծրագրերի շրջանակներում «Հայ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքներում գտնվող Լոռու մարզի 38 համայնքների խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման համակարգերի բարելավում
- Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ նախատեսվում է Վանաձորում ստեղծել Տեխնոլոգիական կենտրոն (տեխնոպարկ)
- «Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» ՄԲԿ Հայաստանյան մասնաճյուղը կշարունակի իրականացնել մարզի 30 համայնքներում (Թումանյանի 10, Ստեփանավանի 10 եւ Տաշիրի 10 համայնքներում) բազմակողմ ծրագրերի իրականացումը:
- «Քաունթերփարթ Ինթերնեշնլ» կազմակերպությունը Լոռու մարզի վեց համայնքներում (Վանաձոր, Ալավերդի, Ախթալայի, Դսեղ, Դեբեդ, Ծաթեր) կիրականացնի համայնքային ենթակառուցվածքների (ՏԻՄ-երի խրախուսման), մշակութային կյանքի բարելավման եւ երիտասարդության ակտիվացման փոքր ծրագրեր:
- 2014թ-ին կշարունակեն են իրենց բարեգործական աշխատանքները.
- ❖ Ալավերդիում՝ «Հիպոկրատ» հունական բարեգործական բժշկական կենտրոնը (իրականացնում է ազգությամբ հույն, ինչպես նաեւ սոցիալապես անապահով խմբերում ընդգրկված անձանց առաջնային բուժօգնություն, դեղորայքի անվճար տրամադրում),
- ❖ Վանաձորում՝ «Հովարդ Կարագյոզյան» բարեգործական ատամնաբուժական եւ ակնաբուժական Վանաձորյան կենտրոնը,
- ❖ Սպիտակում՝ Ավետարանչական եկեղեցու հովանավորությամբ գործող «Հույս Հայաստանին» և «Ֆրանսահայ միության» մանկական բժշկական կենտրոնները,
- ❖ Հայ-շվեյցարական «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի միջոցով մարզի համայնքներին սննդի եւ հագուստի բաշխում

Հավելված 1

**Տեղեկանք**

**ՀՀ Լոռու մարզի 2014-2017 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2014թ. Տարեկան աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքների վերաբերյալ**

Հ/Հ	Միջոցառման համառոտ բովանդակությունը	Գումարը (հազ. դրամ)	Ֆինանսավորման աղբյուրը	Ծանոթություն
1	2	3	4	5
<b>ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ</b>				
1	«Վալլեքս» ընկերությունների խումբ («Թեղուտ» և «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ներ)	31,902,000.00	Մասնավոր ներդրողներ	
2	ք. Սպիտակի թոշնաֆաբրիկայի կառուցում	900,000.0	Մասնավոր ներդրողներ	
3	Ալավերդում «Թումանյանի աշխարհ» զբոսաշրջության կենտրոնի ստեղծում	22,600.00	Միջազգային կազմակ.	ՊԱԿԱ
4	Անասնապահական փորձնական ֆերմայի ստեղծում Լուսաղբյուր համայնքի տարածքում	19,400.00	Միջազգային կազմակ.	ՊԱԿԱ
<b>Ընդամենը</b>		<b>32,844,000.0</b>		
<b>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ</b>				
<b>ԿՐԹՈՒԹՅՈՒՆ</b>				
1	Վանաձորի թիվ 18 դպրոցի վերակառուցում	100,000.00	ՀՀ պետբյուջե	ՀՀ ՔՆ
2	Մարցի միջնակարգ նոր դպրոցի կառուցում	225,094.00	ՀՀ պետբյուջե	ՀՀ ՔՆ
3	Սպիտակի մանկապատանեկան մարզադպրոցի ըմբշամարտի դահլիճի կառուցում	125,000.00	ՀՀ պետբյուջե	ՀՀ ՔՆ
4	«Ալավերդու արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի վերակառուցում	277,500.00	ՀՀ պետբյուջե	ՀՀ ՔՆ
5	Ստեփանավանում մանկապարտեզի կառուցում	469,000.00	Մասնավոր ներդրողներ	«ՏԱՇԻՐ» ԲՀ
6	Հաղպատի դպրոցի ուժեղացում, վերակառուցում	36,800.00	Այլ միջոցներ	ՀՄՆՀ
7	Վահագնի համայնքի դպրոցի մարզադահլիճի կառուցում	75,580.00	Այլ միջոցներ	ՀՄՆՀ
8	Եղեգնուտի դպրոցի սպորտդահլիճի վերանորոգում, ջեռուցման համակարգի տեղադրում, տանիքի փոխարինում	51,600.00	Այլ միջոցներ	ՀՄՆՀ
9	Ձորագյուղ համայնքի մանկապարտեզի շենքի վերանորոգում	13,800.00	Այլ միջոցներ	ՀՄՆՀ
<b>Ընդամենը</b>		<b>1,374,374.00</b>		
<b>ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ</b>				
1	Քոբայրավանքի վերանորոգում	16,000.00	ՀՀ պետբյուջե	ՀՀ Մշակույթի նախարարություն
2	Սանահինի վանքի վերանորոգում	18,300.00	ՀՀ պետբյուջե	ՀՀ Մշակույթի նախարարություն
3	«Լոռի Բերդ» ամրոցի հիմնանորոգում	15,000.00	ՀՀ պետբյուջե	ՀՀ Մշակույթի նախարարություն

4	Դսեղի Քառասնից մանկաց վանքի նախագծահետ. աշխ.	1,200.00	ՀՀ պետբյուջե	ՀՀ Մշակույթի նախարարություն
5	Աքորու Բզավոր եկեղեցու վերանորոգում	13,000.00	ՀՀ պետբյուջե	ՀՀ Մշակույթի նախարարություն
<b>Ընդամենը</b>		<b>63,500.000</b>		
<b>ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ</b>				
1	Վանաձորի բժշկական կենտրոնի կառուցում		Վարկային միջոցներ	հայտարարված է մրցույթ
2	«Լեռնապատ ԱԿ» ՓԲԸ-ի շենքի կառուցում		Վարկային միջոցներ	հայտարարված է մրցույթ
3	Ալավերդու հիվանդանոցի դիահերձարանի կառուցում	31,000.00		ՀՄՆՀ
4	Վանաձորի բժշկական կենտրոնի կառուցում (համաֆինանսավորում)	1,000,000.00	Այլ միջոցներ	«Տաշիր» ԲՀ
<b>Ընդամենը</b>		<b>1,031,000.000</b>		
<b>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>				
<b>Ընդամենը</b>		<b>0.0</b>		
<b>Ընդամենը Սոցիալական ոլորտներ</b>		<b>2,468,874.00</b>		
<b>ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ</b>				
1	Վանաձորում բնակելի շենքերի վերանորոգում (48 բնակարան)	200,000.0	ՀՀ պետբյուջե	ՀՀ Պաշտպանության նախարարություն
2	Վանաձորի Տգրան Մեծի 47 հասցեում բազմաբնակարան շենքի կառուցում	860,000.0	Մասնավոր ներդրում	
<b>Ընդամենը</b>		<b>1,060,000.0</b>		
<b>ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ</b>				
1	Այրում-Ճոճկան, Շնող-1, Ճոճկան-1 և Ճոճկան-2 պ/կ-ների նորոգման աշխատանքներ	12,000.00	ՀՀ պետբյուջե	
2	«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցակցության» ծրագիր Արտոների կառավարում և անասնապահության զարգացում	150,000.00	Այլ միջոցներ	
<b>Ընդամենը</b>		<b>162,000.0</b>		
<b>ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>				
1	ք. Ալավերդում բնապահպանական ծրագրերի իրականացում	120,000.0	Համայնքային բյուջե	
2	ք. Ախթալայում բնապահպանական ծրագրերի իրականացում	4,500.0	Համայնքային բյուջե	
3	Աքորի համայնքում բնապահպանական ծրագրերի իրականացում	30,000.0	Համայնքային բյուջե	
4	Հազվի համայնքում բնապահպանական ծրագրերի իրականացում	30,000.0	Համայնքային բյուջե	



5	Հաղպատ համայնքում բնապահպանական ծրագրերի իրականացում	27,000.0	Համայնքային բյուջե	
6	Օձուն համայնքում բնապահպանական ծրագրերի իրականացում	12,498.4	Համայնքային բյուջե	
<b>Ընդամենը</b>		<b>223,998.4</b>		
<b>ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ</b>				
<b>ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ</b>				
1	Ա/6 Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման, կմ32+240 կամուրջի հիմնանորոգում	92,096.7	ՀՀ Պետ բյուջե	ՀՀ տրանսպորտի նախարարություն
2	Ա/6 Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման, կմ32 թունելի հիմնանորոգում	138,000.0	ՀՀ Պետ բյուջե	ՀՀ տրանսպորտի նախարարություն
3	Պուշկինի լեռնանցքի թունելի հիմնանորոգում	83,000.0	ՀՀ Պետ բյուջե	ՀՀ տրանսպորտի նախարարություն
4	Մարզային ա/ճանապարհների պահպանում եւ շահագործում	68,001.0	ՀՀ Պետ բյուջե	Լոռու մարզպետարան
5	<b>Ճանապարհների վերանորոգում հետևյալ համայնքներում</b>			
6	Վանաձոր	15,000.00	Համայնքային բյուջե	
7	Գուգարք	9,565.00	Համայնքային բյուջե	
8	Ստեփանավան	6,554.00	Համայնքային բյուջե	
9	Կուրթան	5,309.74	Համայնքային բյուջե	
10	Վարդաբլուր	3,145.74	Համայնքային բյուջե	
11	Ամրակից	1,000.00	Համայնքային բյուջե	
12	Ուրասար	188.43	Համայնքային բյուջե	
13	Կաթնաղբյուր	3,000.00	Համայնքային բյուջե	
14	Բովաձոր	222.22	Համայնքային բյուջե	
15	Շամլուղ	800.00	Համայնքային բյուջե	
16	Թեղուտ	1,100.00	Համայնքային բյուջե	
17	Ճոճկան	800.00	Համայնքային բյուջե	
18	Մեծ Այրում	400.00	Համայնքային բյուջե	
19	Շամուտ	160.00	Համայնքային բյուջե	
20	Լեռնահովիտ	2,680.00	Համայնքային բյուջե	
21	Նովոսելցովո	309.97	Համայնքային բյուջե	
22	Լուսաղբյուր	1,000.00	Համայնքային բյուջե	
23	Կաթնաջուր	6,150.00	Համայնքային բյուջե	
24	Ծաղկաբեր	1,000.00	Համայնքային բյուջե	
25	Արևաշող	1,500.00	Համայնքային բյուջե	
26	Գեղասար	500.00	Համայնքային բյուջե	
27	Շենավան	700.00	Համայնքային բյուջե	
28	Գոգարան	700.00	Համայնքային բյուջե	
29	Ղուրսալի	950.00	Համայնքային բյուջե	
<b>Ընդամենը</b>		<b>443,832.80</b>		

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ			
1	KFW-Գերմանական վարկային ծրագիր «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող համայնքներում ջրամատակարարման բաշխիչ ցանցերի կառուցում	1,442,423.00	Վարկային միջոցներ
2	«Եվրոպական վերակառուցման» և «Ասիական բանկի» ծրագրեր «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող 38 համայնքների խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավում	2,810,000.00	Վարկային միջոցներ
3	<b>Ջրամատակարարման համակարգերի վերանորոգում հեղկյալ համայնքներում</b>		
4	Գուգարք	2,845.0	Համայնքային բյուջե
5	Բազում	5,705.3	Համայնքային բյուջե
6	Ուրասար	300.0	Համայնքային բյուջե
7	Կաթնաղբյուր	2,000.0	Համայնքային բյուջե
8	Ուռուտ	300.0	Համայնքային բյուջե
9	Շամլուղ	500.0	Համայնքային բյուջե
10	Արդվի	28.0	Համայնքային բյուջե
11	Թեղուտ	1,000.0	Համայնքային բյուջե
12	Հաղպատ	1,000.0	Համայնքային բյուջե
13	Մարց	305.1	Համայնքային բյուջե
14	Մեծ Այրում	500.0	Համայնքային բյուջե
15	Մղարթ	1,900.0	Համայնքային բյուջե
16	Քարինջ	250.0	Համայնքային բյուջե
17	Նորաշեն	1,000.0	Համայնքային բյուջե
18	Լեռնահովիտ	2,500.0	Համայնքային բյուջե
19	Կաթնառատ	500.0	Համայնքային բյուջե
20	Միխայելովկա	600.0	Համայնքային բյուջե
21	Մեդովկա	800.0	Համայնքային բյուջե
22	Նովոսելցովո	150.0	Համայնքային բյուջե
23	Պրիվոլնոյե	3,000.0	Համայնքային բյուջե
24	Լուսաղբյուր	953.3	Համայնքային բյուջե
25	Լեռնանցք	1,950.0	Համայնքային բյուջե
26	Կաթնաջուր	3,000.0	Համայնքային բյուջե
27	Ծաղկաբեր	1,000.0	Համայնքային բյուջե
28	Շիրակամուտ	979.2	Համայնքային բյուջե
29	Արևաշող	2,200.0	Համայնքային բյուջե
30	Սարամեջ	1,650.0	Համայնքային բյուջե
31	Նոր Խաչակապ	400.0	Համայնքային բյուջե
32	Շենավան	600.0	Համայնքային բյուջե
33	Ղուրսալի	980.0	Համայնքային բյուջե
<b>Ընդամենը</b>		<b>4,291,318.9</b>	
ԳԱԶՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ			
<b>Ընդամենը</b>		<b>0.0</b>	
<b>Ընդամենը ենթակառուցվածքներ</b>		<b>4,735,151.7</b>	
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԼՈՒՈՒ ՄԱՐԶ</b>		<b>41,494,024.1</b>	

Հավելված 2.

ՀՀ 2014թ. պետական բյուջեով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն ըստ ծրագրերի, ծախսատեսակների և կատարողների (առանց օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված նպատակային վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրերի)

հազ. դրամ

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման			Շրջան	ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	այդ թվում՝			
բաժին	խումբ	դաս				Շենքերի և շինությունների շինարարություն	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	Նախագծահետազոտական, գեոդեզիաքարտեզագրական աշխատանքներ	Ոչ ֆինանսական ակտիվների գծով այլ ծախսեր
				<b>ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</b>	<b>270000.0</b>	<b>181800.0</b>	<b>0.0</b>	<b>68200.0</b>	<b>20000.0</b>
				այդ թվում՝					
08	02	07	05	<b>Հուշարձանների ամրակայում, նորոգում և վերականգնում</b>	<b>250000.0</b>	<b>181800.0</b>	<b>0.0</b>	<b>68200.0</b>	<b>0.0</b>
				այդ թվում՝					
				<b>ՀՀ Լոռու մարզ</b>	<b>63500.0</b>	<b>57300.0</b>	<b>0.0</b>	<b>6200.0</b>	<b>0.0</b>
				գ.Քոբեր ե/գ կայարան Քոբայրավանք	16000.0	11000.0		5000.0	
				ք.Ալավերդի, Սանահինի վանք	18300.0	18300.0			
				գ. Լոռի բերդ, Լոռի բերդ ամրոց	15000.0	15000.0			
				գ. Դսեղ, Քառասնից մանկանց վանք	1200.0			1200.0	
				գ. Աքորի, Բգավոր եկեղեցի	13000.0	13000.0			
				<b>ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</b>	<b>26513048.6</b>	<b>22263104.5</b>	<b>629029.5</b>	<b>0.0</b>	<b>3620914.6</b>
				այդ թվում					
02	01	01	02	<b>Ռազմական կարիքների բավարարում, որից՝</b>	<b>25971245.6</b>	<b>22263104.5</b>	<b>629029.5</b>	<b>0.0</b>	<b>3079111.6</b>
				Վանաձորում բնակելի շենքի վերանորոգում (48 բնակարան)	200000.0		200000.0		
				<b>ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</b>	<b>13238484.2</b>	<b>0.0</b>	<b>13140580.7</b>	<b>97903.5</b>	<b>0.0</b>
				այդ թվում՝					
04	05	01	03	<b>Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում,</b>	<b>563096.7</b>	<b>0.0</b>	<b>545096.7</b>	<b>18000.0</b>	<b>0.0</b>
				այդ թվում՝					
				<b>1. Կամուրջների հիմնանորոգում</b>	<b>92096.7</b>	<b>0.0</b>	<b>92096.7</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>
				Մ-6 Վանաձոր -Ալավերդի - Վրաստանի սահման, կմ 32+240 կամուրջի հիմնանորոգում	92096.7		92096.7		

				<b>2. Թունելների հիմնանորոգում</b>	<b>442000.0</b>	<b>0.0</b>	<b>442000.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>
				այդ թվում՝					
				Պուշկինի թունելի հիմնանորոգում	83000.0		83000.0		
				Մ-6 Վանաձոր -Ալավերդի - Վրաստանի սահման, կմ 32 թունելի հիմնանորոգում	138000.0		138000.0		
				<b>ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</b>	<b>17254998.8</b>	<b>2851980.1</b>	<b>14399081.7</b>	<b>0.0</b>	<b>3997.0</b>
				այդ թվում					
<b>09</b>	<b>06</b>	<b>01</b>	<b>02</b>	<b>Կրթական օբյեկտների հիմնանորոգում</b>	<b>12194990.1</b>	<b>0.0</b>	<b>12194990.1</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>
				այդ թվում					
				ՀՀ Լոռու մարզ	100000.0	0.0	100000.0	0.0	0.0
				Վանաձորի թիվ 18 դպրոցի վերակառուցման աշխատանքներ	100000.0		100000.0		
<b>09</b>	<b>06</b>	<b>01</b>	<b>05</b>	<b>Կրթական օբյեկտների շինարարություն</b>	<b>1837067.2</b>	<b>1837067.2</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>
				այդ թվում					
				ՀՀ Լոռու մարզ	225094.0	225094.0	0.0	0.0	0.0
				գ. Մարցի միջն. Դպրոց (նորի կառուցում)	225094.0	225094.0			
<b>09</b>	<b>06</b>	<b>01</b>	<b>06</b>	<b>Մարզական օբյեկտների շինարարություն</b>	<b>764912.9</b>	<b>764912.9</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>
				այդ թվում					
				ՀՀ Լոռու մարզ	125000.0	125000.0	0.0	0.0	0.0
				ՀՀ Լոռու մարզի ք Սպիտակի մանկապատանեկան մարզադպրոցի ընթշամարտի դահլիճի կառուցում	125000.0	125000.0			
<b>09</b>	<b>06</b>	<b>01</b>	<b>45</b>	<b>«Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխման շարունակություն և զբաղվածության հայեցակարգի մշակում» ծրագրի շրջանակներում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հիմնանորոգում</b>	<b>1226750.0</b>	<b>0.0</b>	<b>1226750.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>
				այդ թվում					
				ՀՀ Լոռու մարզ	277500.0	0.0	277500.0	0.0	0.0
				«Ալավերդու արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի վերակառուցման աշխատանքներ	277500.0		277500.0		

**Հավելված 3**

**2014 թվականի Տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների տրամաբանական հենքը**

**3.1. Առողջապահության ոլորտի տրամաբանական հենքը**

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Տեղեկատվության աղբյուր	Մարզպետարանի պատասխանատու օղակ	Ժամկետ	Կարևոր նախապայմաններ
<b>Նպատակ 1. Տեղային և մարզային մակարդակներում կառավարման, մոնիտորինգի և վերահսկողության բարելավում</b>					
1) Մարզային մակարդակում կազմակերպչական, մեթոդական և վերահսկողական գործառույթների մշակում և հաստատում	Մեթոդական ուղեցույցների առկայություն <b>Որոշ մասնագիտությունների գծով ՀՀ ԱՆ կողմից մշակվել են մասնագիտական ուղեցույցներ</b>	ՀՀ առողջապահության նախարարություն	ԼՄ աշխատակազմի առողջապահության և սոց.ապահովության վարչություն	Տարվա ընթացքում	
2) Ազգաբնակչության առողջության վիճակի գնահատման և մոնիտորինգի համակարգի ուժեղացում, առողջապահական տվյալների հավաքագրման որակի և հավաստիության բարելավում, հետադարձ կապի ապահովում	Հիվանդացության ցուցանիշի նվազում, դիսպանսերիզացիայի ցուցանիշ Ներմարզային մոնիտորինգային խմբի հաշվետվություններ	Մարզի տարածքում գտնվող բոլոր բժշկական հաստատությունները	ԼՄ աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն	Տարվա ընթացքում	«Ներմարզային մոնիտորինգային խմբի առկայություն»
3) Երեխաների և դեռահասների առողջության վիճակի գնահատման և մոնիտորինգի համակարգի ուժեղացում, առողջապահական տվյալների հավաքագրում՝ առանձնացված ըստ տարիքի և սեռի	Առանձնացված ըստ տարիքի և սեռի տվյալների առկայություն, պլանավորման արդյունավետության բարձրացում <b>կանխարգելիչ զննումներ</b>	Մարզի տարածքում գտնվող բոլոր բժշկական հաստատությունները	ԼՄ աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն	Տարվա ընթացքում	Տարեկան հաշվետվությունների առկայություն
<b>Նպատակ 2. Տարբեր մակարդակների բուժհաստատություններում մասնագետներով և սարքավորումներով հագեցվածության ապահովում</b>					
1) Մարզի պահանջներին համապատասխան մասնագիտություններով նպատակային մագիստրատուրայի և կլինիկական օրդինատուրաների նպատակային ուղեգրման համակարգի ներդրում	Մարզի բուժհաստատություններում համապատասխան մասնագետների առկայություն, բուժօգնության որակի և մատչելիության բարելավում	Մարզային ենթակայության բժշկական հաստատություններ	ԼՄ աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն	Տարվա ընթացքում	ՀՀ ԱՆ կողմից տրամադրված ֆինանսավորում

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Տեղեկատվության աղբյուր	Մարզպետարանի պատասխանատու օղակ	Ժամկետ	Կարևոր նախապայմաններ
2) Մարզի մասնագետների որակավորման նպատակային ծրագրի մշակում և ներդրում: Մասնագետների շարունակական ուսուցման համակարգում և իրականացում	Մարզի բուժհաստատություններում համապատասխան մասնագետների առկայություն, բուժօգնության որակի ցուցանիշների բարելավում	Մարզային ենթակայության բժշկական հաստատություններ	ԼՄ աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն	Տարվա ընթացքում	ՀՀ ԱՆ ԱՄԻ վերապատրաստման ծրագրերի առկայություն
3) Մարզի բուժհաստատություններին անհրաժեշտ սարքավորումներով ապահովում	Անհրաժեշտ սարքավորումների առկայություն	Մարզային ենթակայության բժշկական հաստատություններ	ԼՄ աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն	Տարվա ընթացքում	ՀՀ ԱՆ և այլ աղբյուրների կողմից տրամադրված ֆինանսավորում
<b>Նպատակ 3. Ազգաբնակչությանը ցուցաբերվող բուժօգնության որակի և մարչելիության շարունակական բարձրացում</b>					
1) Ընտանեկան բժշկության գծով բժիշկների և բուժքույրերի վերապատրաստում, ընտանեկան բժշկության գրասենյակների ստեղծում խոշոր համայքներում:	Վերապատրաստված բժիշկների և բուժքույրերի թիվը	ԼՄ աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն	ԼՄ աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն	Տարվա ընթացքում	ՀՀ ԱՆ ԾԻԳ-ի կողմից ֆինանսավորում
2) Հիվանդանոցային ծառայությունների հզորացում և հագեցում ժամանակակից սարքավորումներով, ինտենսիվ թերապիայի և վերակենդանացման ծառայությունների շեշտադրմամբ	Ժամանակակից բուժսարքավորումներով հագեցած հիվանդանոցներ	Հիվանդանոցներ և տարածաշրջանային բժշկական կենտրոններ	ԼՄ աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն	Տարվա ընթացքում	ՀՀ ԱՆ և այլ աղբյուրների կողմից տրամադրված ֆինանսավորում

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Տեղեկատվության աղբյուր	Մարզպետարանի պատասխանատու օղակ	Ժամկետ	Կարևոր նախապայմաններ
<b>Նպատակ 4. Բնակչության ոչ վարակիչ հիվանդություններով հիվանդացության և մահացության կրճատում</b>					
<p>1. Առողջության ամրապնդման և հիվանդությունների (ոչ վարակիչ) կանխարգելման կենտրոնի ստեղծում</p> <p>1) ոչ վարակիչ հիվանդությունների տարածվածության և նրանցից մահացության իրավիճակի գնահատում և վերլուծություն, հիմնախնդիրների վերհանում:</p> <p>2) ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների տարածվածության ուսումնասիրություն, վերլուծություն, գնահատում, նվազեցման ուղիների մշակում</p> <p>3) Մեթոդական ձեռնարկների մշակում և տպագրում:</p> <p>4) Համապատասխան կրթական ծրագրերի իրականացում և մասնագետների ուսուցում</p> <p>5) Ազգաբնակչության կրթության կազմակերպում ՀԼՄ-ների հետ համատեղ ծրագրերի իրականացում</p>	<p>ա) Ոչ վարակիչ հիվանդություններից մահացության ցուցանիշի իջեցման %:</p> <p>բ) Ոչ վարակիչ հիվանդություններով առաջնակի հիվանդացության ցուցանիշի նվազման %</p> <p>գ) Ոչ վարակիչ հիվանդությունների առավել տարածված ռիսկի գործոնների (ծխել, ադինամիա, հավելյալ քաշ) տարածվածության նվազման %</p> <p>դ) Մարզկենտրոնում կստեղծվի հանրապետական նշանակության կանխարգելման և առողջության կենտրոն՝ նպաստելով մարզային զարգացման քաղաքականության իրականացմանը:</p> <p>ե) Մարզում առողջության միջավայրի ստեղծում, ազգաբնակչության պատասխանատվության բարձրացում և իրազեկվածության մեծացում:</p>	<p>Մարզային ենթակայության բոլոր բժշկական հաստատությունները</p>	<p>Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն</p>	<p>Տարվա ընթացքում</p>	<p>ՀՀ կառավարության կողմից համապատասխան ծրագրերի առկայություն</p>

**3.2. Սոցիալական պաշտպանության ոլորտի տրամաբանական հենքը**

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Տեղեկատվության աղբյուր	Մարզպետարանի պատասխանատու օղակ	Ժամկետ	Կարևոր նախապայմաններ
<p><b>Ոլորտային նպատակ՝</b> Բարձրացնել Լոռու մարզում բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիությունը և որակը</p>	<p>1. Սոցիալական ծառայությունների հասցեականությունից և որակից բնակչության սոցիալապես խոցելի բավարարվածության աստիճան, %</p> <p>2. Աշխատանքի տեղավորված գործազուրկների տեսակարար կշիռը, %</p> <p>3. Ոչ նյութական աջակցություն ստացած հաշմանդամների, ծերերի տեսակարար կշիռը, %</p> <p>4. Սոցիալական պաշտպանության ծրագրերում ընդգրկված խոցելի խմբերի ներկայացուցիչների տեսակարար կշիռը, %</p>	<p>Մարզպետարան, ՍԾՏՏՄ-ներ, Զբաղվածության կենտրոններ, Մոնիտորինգի տարեկան հաշվետվություն</p>	<p>Սոցիալական ապահովության բաժին</p>	<p>2014թ.</p>	<p>Սոցիալական պաշտպանության ոլորտը ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է:</p> <p>Ֆինանսական միջոցները բաշխված են և ժամանակին հատկացված:</p>
<p><b>1. Լոռու մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների նյութատեխնիկական պայմանների բարելավում՝ համակարգի գործունեության արդյունավետության և որակի բարձրացում</b></p>					
<p><b>ԾՐԱԳԻՐ թիվ 1.</b> Լոռու մարզում սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինների շենքային պայմանների բարելավում և սոցիալական տարբեր ծառայությունների գործունեության կազմակերպում և համակարգում</p>					
<p>1.1. Սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների շենքային պայմանների բարելավում, սպասարկման որակի բարձրացում, սպասարկում մեկ կանգառից</p>	<p>Շենքային պայմանները բարելավված սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների տեսակարար կշիռը, %</p>	<p>ՀՀ ԱՍՆ, ՀՀ ՏԿՆ, Մարզպետարան</p>	<p>Սոցիալական ապահովության բաժին</p>	<p>2014թ.</p>	<p>Նախատեսված են նպատակային ֆինանսական միջոցներ</p>
<p>1.2. Սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների (պետական, ոչ պետական) համակարգչային տեխնիկայով հագեցում և համացանցային կապով ապահովում</p>	<p>Սոցիալական ծառայություններ մատուցող կառույցներում (մարզպետարան, ՍԾՏՏՄ) համացանցային կապ ունեցող կառույցների թիվը, %, նոր համակարգիչների տեսակարար կշիռը, %</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, Մարզպետարան</p>	<p>Սոցիալական ապահովության բաժին</p>	<p>2014թ.</p>	<p>Մարզում գործող սոցիալական ծառայություններ մատուցողները շահագրգռված են փոխանակել տեղեկատվությունը</p>



Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Տեղեկատվության աղբյուր	Մարզպետարանի պատասխանատու օղակ	Ժամկետ	Կարևոր նախապայմաններ
<b>2. Սոցիալական ապահովության բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստում</b>					
2.1. Մարզում սոցիալական ծառայությունների մատուցող կազմակերպությունների (պետական, ՏԻՄ, ոչ պետական) սոցիալական աշխատանք կատարող կադրերի վերապատրաստում կարիքների գնահատման, դոնորներ և հովանավորներ որոնելու հմտությունների զարգացման վերաբերյալ (դասընթացներ, միջազգային փորձ և այլն)	Դասընթացներին մասնակցածների թիվը մարզպետարան, ՍԾՄՏՄ, ՏԻՄ, ՀԿ-ներ) Դոնորների և մասնավոր բարերարների կողմից ֆինանսավորվող կարիքավոր խմբերին ուղղված աջակցության ծառայությունների թիվը՝	Մարզպետարան, ՍԾՄՏՄ-ներ, ՏԻՄ-եր, ՀԿ-ներ	Սոցիալական ապահովության բաժին	2014թ.	Սոցիալական աշխատանք կատարողները ցանկություն ունեն զարգացնելու սեփական հմտությունները
<b>3. Սոցիալական սպասարկման բնագավառի մատչելի միջավայրի ապահովում</b>					
<b>ԾՐԱԳԻՐ թիվ 2.</b> Լոռու մարզի քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում թեքահարթակների կառուցում	Կառուցված թեքահարթակների թիվը, %	Համայնքներ, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություններ	Սոցիալական ապահովության բաժին, Համայնքներ	2014թ.	ՀՀ կառավարության ծրագրային ուղղություն
<b>4. Տարածքային սոցիալական պլանների կազմում և իրականացում</b>					
<b>ԾՐԱԳԻՐ թիվ 3.</b> Աջակցություն ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից իրականացվող «Աշխատանքային միգրացիայի սոցիալական հետևանքների մեղմացում և տեղական զարգացման գործընթացում միգրանտների ներգրավվածության մեծացում» ծրագրին՝ ենթածրագրերի (տարածքային սոցիալական պլանների) միջոցով	Իրականացված ծրագրերի թիվը,  Ծրագրերին մասնակից ընտանիքների թիվը	ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ,  Լոռու մարզպետարան, Համայնքներ	Սոցիալական ապահովության բաժին	2014թ.	Միջոցառումների իրականացման համար ակնկալվում է ֆինանսավորում դոնոր կազմակերպություններից
<b>5. Աջակցություն բնակարանային ապահովման քաղաքականությանը</b>					
<b>ԾՐԱԳԻՐ թիվ 4.</b> Փախստականների ընտանիքների բնակարանային ապահովում	Բնակարանային պայմանները բարելավված փախստական ընտանիքների ✓ թիվը, ✓ տեսակարար կշիռը (%)	ՀՀ տարածքային կառավարման նախարարության պետական միգրացիոն ծառայություն	Սոցիալական ապահովության բաժին	2014թ.	Առկա է ֆինանսավորում (դոնորից կամ ՀՀ պետական բյուջեից)

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Տեղեկատվության աղբյուր	Մարզպետարանի պատասխանատու օղակ	Ժամկետ	Կարևոր նախապայմաններ
<b>5. Աջակցություն բնակարանային ապահովման քաղաքականությանը</b>					
<p><b>ԾՐԱԳԻՐ թիվ 5.</b></p> <p>Զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովում</p>	<p>Բնակարանային պայմանները բարելավված զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ թիվը</li> <li>✓ տեսակարար կշիռը (%)</li> </ul>	<p>Սոցիալական ապահովության բաժին, Համայնքներ</p>	<p>Սոցիալական ապահովության բաժին</p>	<p>2014թ.</p>	<p>Միջոցառումների իրականացման համար ակնկալվում է ֆինանսավորում պետբյուջեից</p>